

8125-4<sup>8</sup> - ~~TPK~~

2006



из Книг

Архитектур  
искусства

из учебника  
Гайдомака

С. Озоба

№

45 из 200  
из 1000 экз.

1832 г.

لَهُمْ لِي وَلِي

لَهُمْ لِي وَلِي

لَهُمْ لِي وَلِي

لَهُمْ لِي وَلِي

لَهُمْ لِي

لَهُمْ لِي وَلِي

لَهُمْ لِي وَلِي

لَهُمْ لِي وَلِي

لَهُمْ لِي وَلِي

1906

1751-62%

# ՀԱՄԱՊՈՏՈՒԹՅՈՒՆ

ՄՐԵՍԶԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԵԱՆ ՀԱՆԴԵՐՉ  
ՀԱՄԱՊՈՏՈՒԹՅՈՒՆ ԲԵՌԵՐԵՆԻՒԽ ՚Ի ՀԱՑԼԵԶ  
ՈՒԵ ՚ԻՌՈՒՍ ՎԵՍՆ ԲԵՌԻՑ ՚Ի ՍՄԱ ՊԵ  
ՐՈՒՆԱԿԵԼՈՑ :

**՚Ի պէտո Հայազգի մանկանց .**

Աշխատասիրեաց Տիրացու Յովլէկի Տէր Յովլակիմեան  
Օրբելի , որ աշակերտիցաւ ՚ի Տեարց Լաղարեանց  
Հայկական Շեմարտնին Արևելեան լեզուաց :

**՚Ի Հայրապետութեան Տեառն Յովլ  
հաննու արժանընտիր Կաթուղիկոսի ամե-  
նայն հայոց և Ասպետի :**

Յառաջնորդութեան Ռուսիաբնակ Հայոց Տեառն  
Ներսեսի Սրբազն Աքք Եպսի և Ասպետի :

9624-52



**՚Ի 1832. ՚Ի ՄՈՍԿՈՎ. ՌՄՁԱ.**

**՚Ի պատգամատն Հայունահան Շեմարտնի Տէառն Լաղ-**  
**ընտիր .**

28 + 491.99-3 = 91.96

Ընթերցեալ մէր զձեռագիրս դայս, և ոչ գտեալ յայնմ  
ինչ հտկառակ ուղղափառ եկեղեցւց և հաւատոյ մե-  
րում. կամ բարի վարուց, հրամայեցաք տպագրել :

Դատաքննիչ գրոց Միքայէլ Շայրագոյն Վարդա-  
պետ Սալլանթեանց, Միաբան և Նուիրակ սրբոց  
Խջմիածնի .

՚ի Տառէնք. ՚ի 2 յունիսի . 1832 :

Քաջազուարթ Զօրավարի Առվետնեան  
Գոնդի

Անսայի երբորդ և չորրորդ աստիճանաց  
Ասպետի

Զ Ա Ք Ա Ր Ի Ա Յ Յովհաննիսեան  
Համհաղիղեանց Կամսարականի

՚Ի նշանակ բերանալիք շնորհակալութեան  
և ջերմեռանդն յարդանաց գոհաքան սրախ

Ամենախռնաբհ ընծայաբերէ  
՚ի լոյս ընծայօդ :

Լաւագոյն է զձեռսն համբառնալ առ Աստուած ,  
յորժամ աղօթեսցէ . բայց առաւել կարևոր է , որ ՚ի  
ոլէտս եղքարցն սպասաւորեսցէ . Եղնիկ :

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Աւը Էռանդինալից առ լէղու հայրենաշան, որ հայք ինչ  
Տառն առ բուղըն, ՚ի հերուտնհետէ վաստեալ յիս զնուիանէ  
Կոչոց պայտութոք օգտավելը լինել ըստ հայք ՚ի նահանգ հայտիօն  
լէպուտ գրահանութեան, գուալացոց պիս ՚ի հատուք զորակին  
հանէլ պատմագիտ, ու հայրենալարին՝ լու և խաչութուլ իցէ պատուն  
հանինաթայք = Յանդիման էր աշաց զերսրդն յէրեան ածեցոյ  
զգաղաւալն ՚ի սրպին օլիմպահ էր լինչ գո՛գ առ բաղուտն ալ-  
ըսպակաց համառօտագլութեան Օրբեալան պատճութեան,  
Բայց առաւել իս ՚ի Լամանաշան բարբառ, (Epitome sacrae historiae), զոր ունելով լինչ ինչ էլլը ունցուոք Տառնանիշ՝  
Գուտն գուծեցի յօլինել զնուանափառէն ՚ի լէպուտ մըպուտ ։

Աւասեհ ըստ իմ իշ, աւասեհ ունցէլ գրահանութեան  
լէպուտն առաջապետ չէնաւտ զնուանափառ զնուանափառ, լու հետո  
էպէց ՚ի նախապահէն, լու լէլլըն լիցի այս լեզք յառափառէն  
ընծայտէլ յութեան քնութեան լուսական լուսական ։

Եպապատէ իմ էր գիւղին առանէլ համբահաց իս զուսուտն  
պատճութեան սուրբ գրոց, և զնուանափառ ընտելանալոց լէպուտն  
Որուսոց, յոյք սոհն համառօտագլութեալ զոյս Օրբեալան պատ-  
ճութեան, հարէ անձին վարչաց զհեպ զորթաղան գրոցն երմալ  
ամոյ, զի սրբաղան էր և իմ գրութեան առաջակայ. իսի ՚ի մոխ-  
ճան Տառնին հայքէն զհամառօտ բառարան ՚ի Հայէահանէն  
՚ի Որուսոց լէպուտ զան բառից պարբռնակէլոց ՚ի պատճու-  
թեան յայումի ։

Ը հիմնական շեղուառել զայս քուշուգի ճգանց իմաց  
պարուած + էլ-է շահեւցին ինչ ասուի չայնուին շեր ինչ յեւգ  
գոհաբանութեան պահապահ բարերարաց գերահաշտի պահ  
Լաղարեանց , ով հիմնեալ հառաւուցաւ պահապահ վասն ըստու-  
ւուութեան ապահ ձայոց , ընծայանեւ լինի զանազան գիտու-  
թեանց և գիտուց , ուստանց և ուստանաշանց , զայս և պա-  
հապահ ծանօթութեան հարգեցց ընդ ամեն ՚ի պես գրոյ :

Ել-է չաղեացես ասուի օգուտու մէ և զուս շեր ընդ  
ին շնորհական պապապահ անձանց , ով նոպաստ հապաւուին ինչ  
ալիքաց ՚ի լայս զայս աեարահ , յորոց թջի առաջեն էլ Զօ-  
պահարան կուշաստան գնդի և Ապահեան Զօ աքարիս Յուհան-  
նիստան Կահապահեանց , ով առել լեալ պալաթը ութեան ՝ ի-  
բաւածէք ժուտանգի զանառան ապահութեան :

Ել-է գացես զայս ալահաստոր և մերի , զայս և ես իսպափո-  
ւանիմ , հերուստիմ լիջեւ ակարութեան և չաջալեւ հապաւու-  
թի զերմատանդի սպանի , զեր գուտու գործեցից ՚ի ամ արձանա-  
ցուցանել ուստանականին պահանաց ինչ և զատամել ապա-  
հաստոր չուժի ուջամբ բանակը ութեան :





Անուանք ազգասէր անձանց բարեհաճու-  
թեամբ իւրեանց ստորագրելոց և ձեռնուր  
եղելոց 'ի լոյս ընծայելոյ զԱրբազան պատ-  
մութիւնս զայս :

Մեծապատիւ բժիշկ Սողովմոն ՏՌ յարութիւնեան  
Տէր զուկասեանց :

Կնեալ Գէորդ Սիմոնեան Թռումանեանց :

10 Կլաս Յովհաննէս Գրաբրիէլեան Հարոյեանց :

Կօլեժսկի Սեկրետար Եղիա Պետրոսեան Բեժանբե-  
կեանց :

11 Կլաս Յովհակիմ Հաչաղիպեանց Կամսարական :

12 Կլաս Վարդան Հերմազանեան Վարդանեանց :

13 Կլաս Յովհաննէս Մելքոնեան Միլոյեանց .

Աղնուամեծար Գէորդ Անտոնեան Քեդխուտեանց :

Ազնուական Դաւիթ Գրիգորեան Խերոտինեանց :

Ստեփաննոս Գրաբրիէլեան Խատիսեանց :

Դաւիթ Առաքելեան Սերեբրակեանց .

Մեսրոպ Աստուածատրեան Երեանցով :

Ամբակում Յովհաննիսեան Բուրժալեանց :

Սարգիս Փիլիպպոսեան Փիլիպպոսեանց :  
Անդրէաս Մատթէոսեան Հախումեանց :  
Սարգիս Մահտեսի Մկրտչեան Կուղիկեանց :  
Ստեփաննոս Մելիք Նուբարեանց :  
Ավագանդիլ Տէր Յովհաննիսեան Կուկուջաննեանց :  
Իսահակ Մարտիրոսեան Թանդոյեանց :

---

\*\*\*\*\*  
\*\*\*\*\*  
\*\*\*\*\*  
**Անուանք ազգասէր անձանց զկնի  
ստորագրելոց :**

Աւագ Քահանայ Տէր Գրիգոր Բաղդասարեան Խո-  
ճայեանց :

Բժիշկ Սիմեոն Տէր Գրիգորեան Լորումելիքեանց :  
Աղուական Ղայթմաղ Յովհաննիսեան Ղայթմա-  
զեանց :

Զօրավար և Ասպետ Բաղդասար Գէորգեան Բաստա-  
մեանց :

Աւետիք Մովսիսեան Փիրոյեանց :

Աստուածատուր Տէր Գաբրիէլեան Հեջուբեանց :

Աւետիք Բաղդասարեան Սվեչնիկեանց :

Կարապետ Մինասեան Գարսովեանց :

Բաղդասար Կիրակոսեան Բալասանեանց :

Եսայի Բաղդասարեան Ղանդուրեանց :

Սարգիս Աթանասեան Սվեչնիկեանց :

Գաբրիէլ Աւետիքեան Փուղինեանց :

Յովհաննէս Ստեփաննոսեան Ալդաղեանց :

Յովհաննէս Ստեփաննոսեան Օնանեանց :

Մովսէս Եղիազարեան Ներսիսեանց :








## ՀԱՄԷՌՕՏՈՒԹԻՒՆ

### Սրբազն Պատմութեան



1. Աստուած ստեղծ պերկինս և զերկիր ՚ի վեց աւուրս :

Աստուած ստեղծ զերկինս և զերկիր ՚ի վեց աւուրս : ՃԱռաջին աւուր արար զլոյս . յԵրկրորդում աւուր արար զհաստատուի , զոր և կոչեաց երկին . յԵրրորդում աւուր ժողովեաց զօռւրսն ՚ի մի , և եհան յերկրէ զբոյս և զծառս . ՚ի Չորրորդում աւուր արար զարեգակին , զլու սին և զաստեղս . ՚ի Հինգերորդում աւուր զթուչունս , որք թուշին ընդ օդս երկնի և զծկունս , որք լողան ՚ի ջուրս . ՚ի Վեցերորդում աւուր արար զամարդէն , և հանգեաւ Աստուած յաւուրն եօթներրորդի յամենայն գործոց իւրոց :

2. Աստուած ստեղծ պերկինս պատրին ՚ի հողոյ երէրէ :

Աստուած ստեղծ զմարմին մարդոյ ՚ի հողոյ երկրի և ետ նմա հոգի կենդանի , արար զնա ըստ սլատկերի և ըստ նմանութ իւրում , և կոչեաց զնա Աղամ . Եւ արկ ՏԵՐ Աստուած թմբքութիւն ՚ի վերայ Աղամայ , և առ մի ՚ի կողից նորա , և անտի ստեղծ զկին , զոր ետ Աղամայ օգնական :

3. Աւտուած պեհ պյառքն ՚ի պըտիսին կադշութեաւուած:

Եղ Տէր Աստուած զԱղամ և զԵւայ ՚ի դրախտին վափկուեր, որ և կոչի Դրախտ երկրային ։ անդ էին ամ ծառք գեղեցիկ ՚ի տեսանել և քաղցը ՚ի կերակուր ։ ՚ի միջի նոցա էր և ծառն գիտուեր բարւոյ և չարի ։ Պատուիրեաց Տէր Աստուած Աղամայ և ասէ, յամ ծառոց՝ որ է ՚ի դրախտիդ՝ կերիցես, բաց ՚ի ծառոյն գիտուեր բարւոյ և չարի, զի յորժամ ուտիցես ՚ի նմանէ, մեռանիցիս ։

4. Աւտոմ և Եւայ մէջանչեն ։

Օձն, որ էր իմաստնագոյն քան զամ զազանս՝ ասէ յկինն զի՞ է զի ոչ ուտես ՚ի պտղոյ ծառոյդ այդորիկ ։ ասէ կինն յօձն, այսպէս ասաց մեզ Տէր, եթէ հուզ լինիջիք այդմ, մեռջիք ։ Ամենեենն ասէ օձն, ոչ թէ մեռանիցիք, այլ բացցին աչք ձեր, և լինիջիք իբրև Ած Ճանաչել զչար և զբարի ։ Կինն խաբեալ այսու բառիւք էառ զպտուզն և եկեր և ետ առն իւրում ընդ իւր, և կերան ։ Եւ լուան զձայն դդնալոյ Տեառն այ, և թաքեան Աղամ և Եւայ ՚ի մէջ ծառոց դրախտին ։ Եւ կոչեաց տէր Ած զԱղամ և ասէ, Աղամ նւր ես ։ ասէ Աղամ, լուայ զձայն քո և երկեայ, քանզի մերկ էի և թաքեայ ։ Եւ ասէ ցնա տէր Ած, ո՞պատմեաց քեզ թէ մերկ ես, գուցէ կերար ՚ի ծառոյն այնմիկ, յորմէ և եթպատուիրեցիքեզ չուտել ։ ասէ Աղամ, կինս՝ զոր ետուր ինձ ։ սա ետ ինձ, և կերայ ։ ասէ Տէր Ած յկինն, զի՞նչ դորժեցեր զայդ, և ասէ կինն, օձն խաբեաց զիս և կերայ ։

5. Աւտուած անիժանէ զօջն և նոռափանայ առաջեւ զՓրհեւ ։

Ասէ Տէր Աստուած յօձն, փոխանակ զի խաբեցեր գու զկինն, անիծեալ լիջեր դու յամ անասնոց երկրի

՚ի վերայ լանջաց և որովայնի քոյ գնասոյես , և հող կերեցես զամբ աւուրս կենաց քոց . եւ եղից թշնամուի ՚ի մէջ քո և ՚ի մէջ կնոջդ , նա սպասեսցէ քում զլառյ , և դու սպասեսցես նորա գարշապարի : Իսկ ցկինն ասէ , բազմացուցանելով բազմացուցից զտրտմուիս քո . յաւոք ծնցիս զորդի , և այր քո տիրեսցէ քեզ :

### 6. Ապահ արտահան ՚ի Դրախտէն :

Հուսկ ուրեմն ասէ Տէր յԱղամ , փոխանակ զի լուսը ձայնի կնոջ քո , և կերար ՚ի ծառոյ անտի , յորմէ պատուիրեցի քեզ չուտել , անիծեանլ լիցի երկիր ՚ի գործո քո , փուշ և տատասկ բուսուսցէ քեզ , և քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քո , մինչեւ դարձյիս յերկիր ուստի առար :

Եւ ապա եհան և արձակեաց զԱղամ ՚ի դրախտէն գործել զերկիր , և հրամայեաց Քերովբէից պահել զհանապարհս ծառոցն կենաց :

### 7. Կային և Աբէլ :

Աղամայ ծնան յԵւայէ երկու որդիք , որոց անուանքն էին Կային և Աբէլ . առաջինն էր երկրագործ . իսկ երկրորդն հովիւ խաշանց :

Եւ եղեւ յետ աւուրց երկոքին եղբարք մատուցին պատարագ Աստուծոյ , Կային ՚ի պտղոց երկրի . և Աբէլ յանդրանկաց խաշանց իւրոց :

Հաճոյ թուեցաւ Աստուծոյ պատարագն Աբէլի , իսկ Կայինին ոչ՝ զի մատոյց զայն բռնադատ յօժարութ Ասէ Տէր Աստուած յԿային , ընդէ՞ր նախանձիս ընդեղբայր քո , ոչ ապաքէն եթէ ուղիղ ոչ մատուցեր՝ մեզար , այլզու դարձիր յեղեռնուէ սրտիդ և մի չար ինչ խորհեսցիս՝ զի մի պատուհասակոծ լինիցիս :

## 8. Ապահովանել պլքէլ :

իսկ Կայինի ոչ լուեալ ձայնի Տեառն, և ծածկեալ  
'ի ներքս ՚ի սրտին զքէն, ասէ ցԱբէլ եղբայր իւր,  
եկ երթիցուք ՚ի դաշտ առ ՚ի զքօնուլ :

Եւ իբրև չոգան ՚ի դաշտ անդը, կատաղեալ Կային  
բարկութ ընդդէմ եղբօրն իւրոյ՝ յարեաւ ՚ի վերայ նո-  
րա և սպան զնա անդ :

Յայնժամ ասէ Տէր Աստուած ցԿային . ուր է Ա-  
բէլ եղբայր քո . և նա ասէ՝ չդիտեմ, միթէ պահա-  
պահն իցեմ եղբօրն իմոյ :

## 9. Պատիճ Կայինի :

Եւ ասէ Աստուած, զի՞նչ գործեցեր զայդ՝ ո Կային,  
արիւն եղբօր քո, զոր հեղին ձեռք քո, բողոքէ առ իս  
յերկրէ . Արդ՝ անիծեալ լիջեր դու ՚ի վերայ երկրի,  
որ էարբ զարիւն Աբէլի ՚ի ձեռաց քոց, գործեցես  
զերկիր բազում և մեծ աշխատանօք՝ և ոչ յաւելցէ տալ  
քեզ զպտուղ իւր, երերեալ և տատանեալ եղիցիս ՚ի  
վերայ երկրի :

## 10. Շինուածն Կային Տաղանի :

Իբրև սկսաւ բազմանալ թիւ մարդկան ՚ի վերայ  
երկրի, բազմացան յայնժամ չարիք և մեղք մարդկան,  
ընդ որ սորջացեալ Աստուածոյ ՚ի սրտի իւրում վՃռեաց  
կորուսանել ջրհեղեղաւ զազդ մարդկան :

Բայց Նոյ եղիտ շնորհս առաջի Աստուածոյ, զի էր  
այց արդար և առաքինի : Եւ արար ըստ հրամանի Տեառն  
դտապան մի մեծ ՚ի նմանութի նաւու, և ծեփեաց զայն  
նաւթիւ ներքոյ և արտաքոյ . և էառ ընդիւր յամե-  
նայն անասնոց երկրի երկու երկու անդը ՚ի տաղանն :

11. ՀԱՅԿԵՂԵԿՈ ՅԹՄ ՊՇԽՈՎԻՀԻ 1656 :

Եմուտ ՆՍ և որդիք իւր , կին նորա և կանայք որդւոց նորա ընդ նմտ ՚ի տապահնն , և պատառեցան ամենայն աղքերք անդնդոց և լցաւ ամենայն երկիր ջրով : Յայնժամ էած Տէր անձրեւ ՚ի վերաց երկրի գքառասուն տիւ և լը սւստուն դիշեր : Սստկանայք ջուրն ՚ի վերաց երկրի յոյժ յոյժ մինչեւ հնգետասամն կանգուն բարձրացաւ ՚ի վեր և ծածկեաց զամենայն լերինս աւուրս հարիւր և յիսուն : Եւ մեռաւ ամ մարմին շարժուն ՚ի վը երկրի և ապա սակաւ առ սակաւ սկսաւ նուազիւ ջուրն . և տապահնն նստաւ ՚ի լերինն արարատայ :

12. ԱԼ ՅԻՒԹԱՆ ՋԱԿԵՂԵԿՈՒՆ :

Յամսեանն մետասաներորդի, որ օր առաջին էր ամսոյն , երևեցան գլուխք լերանց + ապա եքաց ՆՍ զպատուհան տապահնին , և արձակեաց զտգուաւ մի , որ ոչ դարձաւ անդրէն յետս + յետ այնորիկ արձակեաց զաղաւոնի , որոյ ոչ զաեւալ հանգիստ ոտից իւրոց՝ դարձաւ անդրէն առ նա ՚ի տապահնն , զի ջուրն դեռ ունէր զամենայն երեսս երկրի . յետ եօթն աւուրց դարձեալ արձակեաց զաղաւնին ՚ի տապահնէ անտի , և դարձաւ առ նա աղտունին ընդ երեկս , և ունէր տերեւ ձիթենւոյ ՚ի բերան իւր + յայնժամ գիտաց ՆՍ , թէ ցածուցեալ են ջուրքն յերկրէ :

13. ԵՐԱ ԷԼՍԻՆԻ ՚ի պապունի :

Եւ ՆՍ և կին նորա որդիք նորա և կանայք որդւոց նորա ընդ նմտ , ամենայն դազան և ամենայն սողուն

շարժուն և ամենայն թռչուն ըստ աղքի իւրեանց և լին ՚ի տապանէ անտի : Յայնժամ շինեաց Նոյ սեղան Աստուծոյ , և եհան ողջակէղ ՚ի վերայ սեղանոյն : Ասէ Տէր Աստուած ցՆոյ , ոչ ևոյ յաւելից հարկանել զամենայն մարմին կենդանի : Զաղեղն իմ եղից յամպս և այն եղիցի ՚ի նշանակ յաւիտենական ուխտին ընդիս և ընդ ամենայն երկիր : Եւ եղիցի ՚ի գումարել իմ զամպս ՚ի վերայ երկրի , երևեսցի աղեղն իմ յամպս և յիշեցից զռւխո իմ՝ որ ընդ իս և ընդ քեզ . և ոչ ևս եղիցի ջրհեղեղ ՚ի սատակել զամենայն մարմին :

#### 14. Ապահովութեան հարստաց Աղքի հարդիան :

Բոլոր աղքք սերեցան յորդւոցն Նոյի . ՚ի Սեմայ սերեցան Ասիացիք , ՚ի քամայ Ափրիկեցիք , և յԱբեժայ Եւրոպացիք : Զօհեղեղն , որ պատիժ էր մարդկան , ոչ ինչ աղդեց ՚ի սիրտս նոցա , զի ՚ի սուզ ժամանակի եղեն մարդիկ վատժարագոյն քան զառաջիննոցի մոռացել զԱստուած , զարարիչն իւրեանց , սկսան պաշտել զարեգակն և զլուսին , անարգել զձնողս , խօսիլ զատութիւն , առնել զլորամանկութիւն , զգողութիւն զմարդասպանութիւն , և միուլ բանիւ ասել՝ ապականեցին զանձինս իւրեանց ամենայն զազրագործութեան :

#### 15. Կոչութեան Ապահովութեան յամ աշխարհի 2083 :

Այլ սակայն էին անձինք ոմանք , որք ունէին առ Աստուած զՃշմարիտ հաւատոս , յորոց միջի էր և յԱբրահամ ՚ի ցեղէն Սեմայ . ը որում եղ Աստուած զուխտ օրինակ զայս , եւ յերկրէ քումմէ և յաղդէ քումմէ և ՚ի տանէ հօր քոյ , և եկ յերկիր , զոր տաց քեզ և զաւակի քոյ ՚ի ժառանգութիւն , բազմացուցից զզաւակքո , եղիցիս հայր աղդաց բազմց և ՚ի քէն օրհնեսցին ամ աղդք երկրի :

46. ὩΝΗΤΕΝΤ ἹΗΜΗΛΙΑΣ :

Աբրահամ ծերացեալ էր արդէն և Սառայ կին նորա  
էր ամուլ . այլ սակայն խոստացաւ Ած տալ նմա որդի .  
եղիցիքեզ, ասէ Ած, որդի՝ ի սարացէ կնոջէ քումմէ . զայս  
լուեալ սարացի ծիծաղեցաւ ընդ միտս իւր, և ոչ հաւա-  
տաց նոյն ժամայն բանին, զոր ասաց նմա Ած . վայ և  
յանդիմանեցաւ յայ : Իսկ Աբրահամ հաւատաց խոտ-  
մանն այ . Եետ անցանելց ամի միոյ ծնաւ որդի աբրահա-  
մու, զոր կոչեաց նա Իսահակ :

47. ԱՅՆ ՀԻՄՆ ԸՆԸՆ ՅԹՈՂԸՆ ՎՐԱ ԱՀԻՄՆ Տ :

Յետ ժամանակաց ինչ սկսաւ աջիլ մանուկին խահակ :  
Ած կամելով փորձել զհաւատս Աբրահամու ասէ յնա .  
առ դու զմիակ որդիդ զիսահակ, զոր սիրես, և հանցես  
զնա յողջակէղ՝ ի վերայ միոյ ՚ի լերանց, զոր ցուցից քեզ :  
Աբրահամ նոյն ժամայն հնազանդեալ հրամանի Տետան  
եդ զիայտն ողջակիզին՝ ի վերայ խահակայ, և ինքն էառ  
՚ի ձեռն իւր զսուր և զհուր : Յետ այսը ամի ասէ իսու-  
հակ ցհայր իւր, հայր՝ ահա հուր՝ և ահա փայտ, ուր է  
ոչխար յողջակէղ . եա նմա պատասխանի աբրահամ ,  
Ած տեսցէ զիւր ոչխար յողջակէղ՝ որդեակ :

48. ԱՅՆ ՀԻՄՆ ՊՐԳԵԼԻ ԱՅՆ ԱՀԻՄՆ Տ :

Աբրահամ ժամանեալ ՚ի տեղին յայն, յոր ասաց նմա  
Ած շինել զսեղան և դնել ՚ի վերայ զփայտն, կա-  
պեալ զձեռս խահակայ, եդ զնա ՚ի վերայ փայտիցն և  
ձգեաց զձեռն առնուլ զսուրն ՚ի զենուլ զորդին իւր :

Յայնժամ զոչեաց յերկնից հրեշտակ տն և ասէ .  
Աբրահամ աբրահամ, մի միեր զձեռն քո ՚ի սլատա-  
նեակդ, զի այժմ զիսայի լծէ ունիս զջշմարիտ հա-

ւասս , և երկիւղած ես յոյ + զի նչ խնայեցեր յորդեդ  
քո սիրելի վա իմ . վայ և ես օքչնեցից զքեղ և բազմա -  
ցուցից զգաւակ քո ող զաստեղս երկնից : Համբարձ աբ -  
բահամ զաջս իւր և ետես զիսյ մի կախեալ զծառոյն , և  
գնացեալ նորա էառ զիսյն և եհան զնա յողջակէղ փոխա -  
նակ իսահակայ որդւոյ իւրոյ :

19. Եղդիտպար երեց ծտուայն Ալբըահամու գնայ ՚ի մը -  
ջագեպս , առ ՚ի բերել անտի զինին ժառն իսահակայ :

Յետ այնորիկ առաքեաց Աբբահամ զծառայ իւր զի -  
ղազար առ ազգակիցս իւր , որք էին ՚ի միջագետս առ ՚ի  
ածել անտի զինին վա որդւոյ իւրոյ իսահակայ : Խառ ծա -  
ռայն զտասն ուղտս յուղտուց Տեառն իւրոյ և գնայ ,  
առեալ ընդ իւր զբազում պարզես առ ՚ի ընծայել  
հարսին և ծնողաց նորին : Մինչդեռ ժամանեաց ՚ի  
միջագետս , եթող զուղտսն արտաքոյ քաղաքին առ  
ջրհորոյ ը երեկս , յորում պահու սովորութիւն էր կա -  
նանց երկրին այնորիկ հանել զշուր :

20. Եղդիտպար ննորիկ յԱլսու-ծոյ , պի ՚ի համազգեպս կիմո -  
հեսցի հին իսահակայ :

Տեր Աստուած ոն խմոյ Աբբահամու . յաջողեան ինձ  
այսօր . և արա զի կոյսն , որում ես տապացից , թէ խո -  
նարհեցն զսափոր քո զի արբից , արբուսցէ ինձ . զայն  
պատրաստեցեր ծառային քում իսահակայ :

Մինչեւ կատարեալ էր նորս զիսօսն ՚ի մտի իւրում  
եկն անդ նոյն ժամայն Ռեբեկայ կոյս գեղեցիկ երեսօք  
յոյժ . էջ յաղթիւր և ելից զսափորն իւր : Յայնժամ  
քեթացաւ ծառայն յառաջ և ասէ . արբան ինձ սակաւ  
մի ջուր ՚ի սափորոյ այտի , ասէ Ռեբեկայ , արբ Տէր

և փութացեալ իջոյ զսափորն ՚ի վերայ բազկաց իւրոց և արքոյ նմա : Յետ արքուցանելոյ գծառայն , փութացաւ և եհան ջուր վասն ուղտուց նորա . իսկ Եղիազար միտ դնէր և լուռ կայր, եթէ յաջողեաց ոք ղջանապարհ նորա՝ թէ ոչ :

21. Եղիազար հայունէ սիրեւեհայ նէ ո՞յս պուստը է՞նս :

Եւ եղե իբրե դադարեցին ուղտքն յըմպելոյ , առ Եղիազար գինդո ոսկիս և երկուս ապարանջանս և ես Որեբեկայի . ապա եհարց զնա՝ և ասէ , ո՞յր դուստր ես դու , պատմեան ինձ թէ իցէ՞ ՚ի տան քում մեղ տեղի իջեվանաց . ասէ ցնա Որեբեկայ , դուստր Բաթուելի եմ ես, և հաւն իմ է եղբայր Աբրահամու . իսկ յարդ և խոտ շատէ մեր՝ նա և տեղի իջեվանաց :

Զայս լուեալ Եղիազարու ուրախ եղե յոյժ յանձն իւր և երջանիկ զանձն իւր համարէր ՚ի ճանապարհի :

22. Բաթուել նուան Ալբահամու ընդունի պլազիազար ՚ի պուտն իւր :

Ընթացաւ Որեբեկայ ՚ի տուն և պատմեաց մօրն զամենայն , որ միանգամ պատահեցաւ ընդ նմա . իբրե լուաւ զբանսն Որեբեկայի Լաբան եղբայր նորա ընթացաւ առ այրն արտաքս յաղբիւր և ասէ ցնա . եկ , մուստ ՚ի տուն , օքհնեալ տն , զի՞ կաս արտաքսյ , ևս պատրաստեցի քեզ զտուն և զտեղի վասն ուղտուցդ ։ Եմուտ այրն ՚ի տուն անդք . և եղին հաց առաջի նորա :

23. Որեւեհայ նոսէ ՚ի հայունաւելուն :

Եղիազար հանդեալ ՚ի վաստակոց սակաւիկ մի փու-

Ժայաւ պատմել ծնողացն Ուեքեկայի զպատճառ Ճանապարհորդուեկիւրոյ, և խնդրեաց ՚ի նոցանէ զի հաջեսցին տալ զռեքեկայ ՚ի կնուի խահակայ : Պատասխանի ետուն յայնժամ ծնողքն և ասեն, ՚ի տնէ ել բանդ, և մեք ոչ կարեմք հակառակ կալ կամաց նորա . ահաւադիկ ուեքեկայ առ և գնա և եղիցի կին որդւոյ Տեառն քո խահակայ : Իբրև լուաւ զայս Եղիազար, գոհացաւ զոյ և եհան ահօթս ոսկւոյ և արծաթոյ և հանդերձս զոր ետ ուեքեկայի, և ընծայեաց նոյնպէս բազում ինչ և եղբարց նորա և մօրն, և ապա ցնծացան և ուրախ եղեն յոյժ :

#### 24. Յուղաբէտութիւն Ուեէեհայի :

Յարուցեալ Եղիազար ընդ առաւտօն վաղքաջ ասէ՝ արձակեցէք զիս, զի երթայց առ տէր իմ . զի սպասէ ինձ : Յայնժամ ասեն եղբարքն, կոչեսցուք զաղջեկն և հարցյուք զնա . կոչեցին զռեքեկայ՝ և ասեն, երթաս ընդ առնս ընդ այսմիկ, և նա ասէ՝ երթամ :

Յուղաբէցին յայնժամ զնա և զինչս նորա, ընդ եղիազարու, ցանկալով նմա զամենակերպ երջանկուի և զբարեյաջողութիւն :

#### 25. Աշունահութիւն իսոհանոյ :

Խսահակ ելեալ յերեկոյի զբօսնուլ ՚ի դաշտին, ամբարձ զաջս իւր և ետես, զի գային ուղղոք տասն . և Ուեքեկայ տեսեալ զիսահակ, զի զբօսնոյր, էջ վաղլազակի յուղտոյ անտի, և եհարց ցծառայն, ով է այրն, որ գայ ՚ի դաշտին ընդ առաջ մեք . ասէ ծառայն նաև է տէր իմ, և նորա նոյնժամայն առեալ զծորձս իւր էարկ զիւրեւ . և իբրև հասին առ խսահակ եղիազար պատմեաց նմա զամ զոր ինչ գործեաց, և նա էած զռեքեկայ ՚ի տուն մօրն

իւրոյ և էառ զնա ինքեան ՚ի կնութիւն , որով և մի ։  
թարեցաւ :

26 . Եսուտ վաճառէ զիբաւունս անդրտնիունեան իւրոյ  
Յահովունու :

Ուերեկայ ծնաւ ՚ի միասին զերկու որդիս , զԵսաւ և  
զՅակովը , յորոց առաջինն էր՝ այր հմուտ յորսս և թա-  
ւամտղ , իսկ կրտսէրն այր առանց պաճուճանաց , ըն-  
դասուն . յաւուր միում մինչ եփեալ էր յակովը յժան  
վան իւր յոսպոյ , եկն ՚ի դաշտէ Եսաւ նըթեալ և ասէ  
յեղբայր իւր , տնւր ինձ Ճաշակել ՚ի շիկաթսնէդ յայդ-  
մանէ , զի նըթեալ եմ . ասէ յակովը յեսաւ , տաց  
քեզ , եթէ վաճառեսցես ինձ զիբաւունս անդրանկունդ :  
Ասէ յնա եսաւ , ահաւասիկ ես երժամ ՚ի վախճանել ,  
և առիմէ՞ է ինձ անդրանկուիս . եթէ այդպէս իցէ , ասէ  
յնա յակովը , երդուիր ինձ այսօր . երդուաւ նմա եսաւ  
և այնպէս վաճառեց նմա զիբաւունս անդրանկուն իւրոյ :

27 . Իսահանէ առառէ զԵսուտ յորս :

Իսահակ սիրէր զԵսաւ , զի միշտ կերակրէր զնա որոսկ .  
իսկ ուերեկաց սիրէր զյակովը . յաւուր միում յորժամ  
ծերացեալ էր իսահակ և տկարացեալ էին աչք ՚ի տեսա-  
նելոյ , կոչեաց զեսաւ զորդի իւր և ասէ , արդ՝ մու դու  
զաղեղն և զկապարճս , և ելեալ ՚ի դաշտ որսն ինձ որս ,  
և արա ինձ խորտիկս՝ ող սիրեմ ես , և բեր՝ մատն ինձ,  
զի կերաց և օրհնեցից զքեզ մինչև մեռեալ իցեմ . ել  
և փութացաւ եսաւ յորս ըստ ըանից հօր իւրոյ :

29 . Ուերեկայ մոհեանանէ Եսուտոյ հըսմայէ Յահովունունու  
Գնուլ առ հոյը եւը :

Լուաւ Ուերեկայ զամ , զոր ինչ խօսեցաւ իսահակ

ընդ որդւոյ իւրում եռաւայ . կոչեաց ապա առ ինքն ըլլ  
յակովը և ասէ , գնա դու ՚ի դաշտն և բեր ինձ ան-  
տի երկուս ուլս փափուկս և ընտիրս , արարից զնոսա  
խորտիկս հօր քում որպէս և սիրէ , և դու մատուցես  
նմա և կերիցէ և օրհնեսցէ զքեղ :

**Ասէ** յակովը ցմայր իւր , եղբայր իմ եսաւ այլ  
թաւ է և ես լերկ , գուցէ շօշափեսցէ զիս հայր իմ ,  
և լինիցիմ առաջի նորա իբրև արհամարհոտ , և ածի-  
ցեմ ՚ի վերայ իմ անհծոս փոխանակ օրհնուե :

### 29. Ռեէէէայ պատրաստէ վասն իստհանէայ զէէրտէռու :

Մի երկնչիր որդեակ իմ , ասէ Ռեբեկա , յիմ վերայ  
անհծըն այն , բայց միայն լուր ձայնի իմում և երթ՝  
ած ինձ . գնաց յակովը , էառ , ած մօր իւրում ,  
և արար խորտիկս՝ որպէս և սիրէր հայր նորա : Յայն-  
ժամ առեալ Ռեբեկայ զպատմուշանն աղնիւ որդւոյ  
իւրոյ երիցու , զգեցոյց յակովը և զուլենիսն ագոյց ՚ի  
բազուկս նորա , և ՚ի վերայ մերկ պարանոցի նորա .  
արդ՝ ել գնա , ասէ , առ հայր քո և մատոն նմա զխոր-  
տիկն , զօր սիրէ յոյժ :

### 30. Իստհանէ համարն ու Յանէուլը ՚ի անդի ուստանյն իւրոյ Եստաւայ :

Տարաւ Յակովը և մատոյց զխորտիկն հօր իւրում ,  
զօր պատրաստեալ էր մայր նորա : Յայնժամ եհարց  
իսահակ զնա և ասէ , ով ես դու՝ որդեակ . ես եմ ,  
ասէ Յակովը , Եսաւ անդբանիկ որդին քո , արարի զօր  
ինչ հրամայեցեր ինձ՝ հայր իմ . արի՝ նիստ և կեր  
յորսոյ իմմէ : Զիմբրդ կարացեր , ասէ իսահակ , գտո-  
նել այդակս վազվաղակի որդեակ իմ . ասէ Յակովը՝  
որպէս պատրաստեաց Տէր առաջի իմ . մօտ եկ՝ ասէ

իսահակ ցյակով, զի շօշափեցից զքեղ՝ որդեակ, եթէ  
դու իցես որդի իմ Եսաւ թէ ոչ : Մատեաւ յակովը  
առ իսահակ հայր իւր, որ շօշափեաւ զնա ասէ . ձայնը  
ձայն յակովը, և ձեռք ձեռք եսաւայ : Ոչ ծանեաւ  
զնա իսահակ, զի ձեռք նորա էին իբրև զձեռան եսաւայ  
թաւ, և ետ նմա զտմ օրհնուիս անդրանկութեանն :

31. Եսաւ գոտեայ յէպս յորսոյ և հայցէ զօքհնու -  
լիւն ՚ի հօրէ թւրմէ :

9624-54 Յետ սակաւինչ միջոցի եկն Եսաւ յորսոյ, և մա -  
տոց հօր իւրում զխորտիկն, զոր պատրաստեալ էր :  
Յայնժամ մեծաւ զարմացմամբ ասէ նմա իսահակ, ով  
էր այն, որ եբեր և մատոց ինձ զկերակուը և կերայ  
յամէ մինչ չե՛ քո եկեալ էր և օրհնեցի զնա : Զայն  
ըուեալ Եսաւայ աղաղակեաց ՚ի ձայն մեծ դառնացեալ  
յոց և ասէ յհայր իւր, օրհնեա արդ և զիս Հայր :

32. Փառական Յահովէայ :

9 Յայնմ օրէ վառեալ Եսաւայ բարկութ ընդդէմ եղ -  
բօր իւրոյ՝ սպասէր դիպօղ ժամու, զի սպանցէ զնա ։  
Երկուցեալ Ռեբեկայի զի մի անկցի սիրելի որդին իւր  
՚ի ձեռաց եսաւայ, որդեակ իմ, ասէ, արի զնա առ լա -  
բան եղբայրն իմ և բնակեսցես ընդ նմա առուրս բա -  
զումս մինչև անցցէ սրամտուի բարկուե եղբօր քո : Եւ  
յակովը ըստ պատուիրանի մօրն և գնաց ՚ի միջադետու  
՚ի գնալն ՚ի Ճանապարհին եհաս ՚ի տեղի մի, ուրանօր  
յոգնեալ կարի իմն կամեցաւ սակաւինչ հանգչեւ ՚ի վա -  
տակոց, ուստի առեալ ՚ի քարանց տեղւոյն եդ ընդ սը -  
նարս իւր և ննջեաց :

## 33. ՏԵՇԻԼ ՅԱԿՈՎՅԱՅ

Ետես յակովը ՚ի տեսլեանն զսանդուխս , հաստատեալ յերկը որոյ գլուխն հասանէր մինչեւ յերկինս , և հրեշտակք այ ելանէին և իջանէին ընդ այն . լուռաւ անդէն զի ասէր նմա ԱԾ , ես եմ Տէր ԱԾ հօր քո , մի երկընչըր , զի զերկիրդ , յորում դուդ ննջեցեր , քեզ տաց և զաւակի քում . եւ ես ահաւասիկ ընդ քեզ եմ , եղեց քեզ պահապան յամ Ճանապարհս քո և դարձուցից զքեզ ՚ի հայրենիս քո , ոչ ժողից զքեզ մինչեւ արարից զամ ինչ , զոր խօսեցայ ընդ քեզ . յարեաւ յակովը ՚ի քնոյ անտի և երկիր եպագ Տեառն :

## 34. ՅԱԿՈՎՅԱՅ ՀԱՊՈՒՆԻ ՚ի մըջագէտու :

Յակովը անընդհատ Ճանապարհորդեալ եհաս ՚ի միջագետս , ուրանօր ամբարձեալ զաւս իւր ետես , զի էին երեք հօտք խաշանց մակաղեալ առ ջրհորովն . ՚ի ջրհորոյ անտի սովորութիւն էր արբուցանել զիսաշինս . և վէմ մեծ կայր ՚ի վերայ բերանոյ ջրհորոյն : Մերձեցեալ յակովը առ հովիւսն , ասէ . եղբարք՝ ուստի՞ էք դուք . և նոքա տսեն ՚ի խառանէ եմք :

Դարձեալ հարցանէ զնոսա . գիտէք դուք զլաբան . այն գիտեմք՝ ասեն նոքա . ողջ է նա . և նոքա ասեն՝ ողջ է : Եւ ահա դուստք նոքա ուաքէլ գայ ընդ խաշինսն :

## 35. ԼԱՅԻՆԻ ՊՊՅ ՅԱԿՈՎՅԱՅ ՚ի հնութեան պիտուսութիւնը իւր Ռապէլ :

Մինչեւ խօսէր Յակովը ընդ հովիւսն , ահա Ռա-

Քէլ դուստր Լաբանու գայր ընդ խաշինս , զորս արածէլ նա ՚ի դաշտի : Իբրև ետես յակովը զազգակիցն իւր զՌաքէլ , մատուցեալ տապալեաց զվէժն ՚ի բերանց ջրհօրդն և առէ ցնա ես եմ որդի ռեբեկայի , և համբուրեաց ընդ նմա :

Ուսքէլ փութացաւ պատմել հօր իւրում , որ իբրև ետես զորդի քեռն իւրոյ զիրկս արկ և համբուրեաց զնա . և ետ նմա ՚ի կնուի զգուստր իւր Ռաքէլ :

### 36. Յահովի գոտենայ ՚ի հայլենիս իւր :

Յակովը կացեալ զժամանակս բազումս առ լաբան+ յղացաւ յոյժ ստայուածովք և եղե բաւական հարուստ . յետ անցանելոյ բազում աւուրց ըստ ազգեցուն Աս- տուծոյ վերադարձաւ ՚ի հայրենիս իւր : Երկնչէր յոյժ Յակովը յեղբօրէ իւրմէ , և առ ՚ի յինքն յանկուցա- նել զսիրտ նորա , առաքեաց առ նա զհրեշտակս զի ՚ի դիմաց իւր մատուցեն նմա պատարագս : Իսկ Եսաւ մո- ռացեալ զտմ վրէժ իւր փութացաւ , ել ինքն ընդ առաջ Յակովը այ , զիրկս արկ նմա . և փարեալ զպարա- նոցաւ նորա , համբուրեաց զնա և լացին երկոքեան :

### 37. Մանհութիւն Յովեկայ :

Յակովը ունէր զերկոտասան որդիս , յորոց մին էր և Յովսէփ , զօր սիրէր առաւել քան զտմ որդիս իւր , քանզի որդի ծերուն նորա էր , և արար նմա պատմու- ճան ծաղկեաց : Ա ասն այսոքիկ իսկ յովսէփ ատելի էր յաչս եղբարց իւրոց . մանաւանդ յորժամ պատմեաց եղբարց իւրոց զերկոսին երազս իւր , որք և կատարեցան իսկ . յետ այնորիկ այնչափ սկան ատել զնա , մինչեւ ոչ կարէին խօսիլ ինչ ընդ նմա խաղաղութեամբ :

## 38. Երանեական Յովսեիայ :

**Այսպիսի էր երազն Յովսեիայ, զոր պատմեաց եղալ-քարց իւրոց . թուէր ասէ՝ եթէ որայ կապէաք ՚ի դաշտի մերում, և ահա կանգնեցաւ որայն իմ, եկաց ուղղորդ . իսկ որայքն ձեր դարձան և պադին երկիր իմում որայի : Յետ այնորիկ տեսի միւս ևս այլ երազ . ողջ թէ արեգակն, լուսին և մետասան աստեղք երկիրապատանէն ինձ : Յայնժամ ասեն եղբարքն ցմիմեանս, զի՞նչ նը շանակ իցէ երազս այս, միթէ թագաւորելնվ թագաւորեացէ ՚ի վերայ մեր, կամ տիրելնվ տիրեացէ մեզ, և յաւելին ևս ատել զնա . իսկ հայրն միտ դնէր ընժացից բանիցն :**

## 39. Եղբարքն Յովսեիայ նորհեն ընդ մի մետնո սպանանել զնա :

**Յաւուր միում, մինչդեռ եղբարքն Յովսեիայ արածէին զիսաշինս իւրեանց ՚ի դաշտի անդ, յովսէփ ֆնացեալ էր ՚ի տան ընդ հօր իւրում . ասէ ցնա հայրն, եկ առաքեցից զքեզ առ եղբարս քո, զի բերցես ինձ զըսց, եթէ ողջ իցեն նոքա : Տեսին զնա եղբարքն յառաջադցն ՚ի հեռաստանէ, մինչ մօտ եկեալ էր առ նոսա, և խորհուրդ վատ ՚ի մէջ առին սպանանել զնա : Եւ տաեն իւրաքանչիւր ցեղբայր իւր, ահա երազատեսն դայ, եկայը սպանցուք զնա և ընկեսցնէք ՚ի մի ՚ի գըոց աստի, և հօր մերում ասասցուք, թէ գազան չար եկեր զնա, տեսցուք զի՞նչ լինիցին երազքն նորա :**

## 40. Որութէն ՚ի չեռաց Եղբարքն ըտնոյ աղասիէլ պյունիկ :

**Որութէն, որ երիցագոյնն էր, իբրև լուաւ զայս ըս-**

կըսաւ յորդոր լինել եղբարց իւրոց՝ ի բաց կալ յայդպի-  
սի չարագործուէ . մեծ անօրէնուլի է ասէ հեղուլ զար-  
իւն պատանւոյս այսորիկ , զի նա եղբայր մեր է . այլ լաւ  
է արկանել զգա ՚ի գուբ մի յանապատի աստ . եղեաւ  
՚ի մտի անշուշտ աղատել զնա ՚ի ձեռաց եղբարց իւրոց ,  
և հանեաւ ՚ի գբոյ անտի հասուցանել զնա առ հայր իւր ։  
Ամենեքին վՃռեցին առնել ըստ բանից նորա ։

#### 41. Յովեհի նոմանի յեղբարց իւրաց :

Իբրև եկն յովսէփ առ եղբարսն իւր , մերկացուցին ըզ  
պատմուչանն նորա ծաղկեայ , զոր զգեցեալն էր և ա-  
ռին ընկեցին զնա ՚ի գուբ , եւ ինքեանք նստեալ յետոյ  
մինչզեռ ուտէին զհաց , զաշս ՚ի վեր ամբարձեալ տե-  
սին , զի վաճառականք ելեալ ՚ի գաղաադէ գնային յե-  
գիսպտոս , և ուղտք նոցա լի էին խնկովք անուշահոտուէ ։  
Յայնժամ ըստ խորհրդոյ Յուդայի վՃռեցին ամենեքեան  
վաճառել զյովսէփ վաճառականացն այնոցիկ . որք և  
վաճառեցին զյովսէփ քսան դահեկանի վաճառականացն ,  
և նոքա իջուցին զնա յեղիսպտոս ։

#### 42. Եղբարցն Յովեհիայ տուաչէն պատմուման նորա- տու հայըն իւրբետնց :

Յայնժամ առեալ եղբարցն զպատմուչանն Յովսէ-  
փայ թաթաւեցին յարեան ուլու , զոր զենեալն էին և  
առաքեցին զայն առ հայրն իւրեանց ասելով այսպէս ,  
զայդ գտաք . ծանիր եթէ որդւոյ քո իցէ պատմաճանդ՝  
թէ ոչ ։

Տեսեալ զայն հօրն աղաղակեաց անդէն և ասէ , պատ-  
մուչանս որդւոյ իմոյ է , գաղան չար եկեր վնա . գա-  
ղան յափշտակեաց զյովսէփ ։ Եւ պատառեալ զհան-

դերձս իւր , սուրկ զգեցաւ վա որդւոյն իւրոյ աւուրս բա-  
զումս :

Եւ ժողովեցան ամենայն ուստերք նորա և դստերք  
առ ՚ի միմիթարել զնա . բայց յակովը ոչ կամէր միմ-  
իթարիլ և ասէր . իջեց ես սովին սղով առ որդի իմ  
՚ի գերեզման :

#### 43. Պետական Գհե Առաջենք .

Ա աշառականքն տարեալ զՅովսէփ յեգիպտոս վա-  
ճառեցին Պետափրեայ ներքինւոյ դահճապետին փարա-  
ռանի : Եւ Տէր էր ընդ Յովսեփայ . և զամ ինչ , զոր  
առնէր , Աստուած յաջողէր նմա :

Եգիտ Յովսէփ շնորհս առաջի Տեառն իւրոյ , որ և  
կացոյց զնա ՚ի վերայ տան իւրոյ . զամ ինչ որ իւր էր  
տալով ՚ի ձեռս Յովսեփայ , և ոչ գիտէր զամ , որ  
ինչ կայր ՚ի տան իւրում բայց միան զհացն , զոր ու-  
տէր :

#### 44. Յովսէփ արէտանի ՚ի բանա :

Յովսէփ էր ազնիւ երեսօք և գեղեցիկ յոյժ տես-  
լեամբ : Կին Պետափրէի արկ զաջս իւր ՚ի վերայ յով-  
սեփայ . և յորդորէր զնա մեղանչել ընդ իւր : Իսկ  
յովսէփ ամենակին ոչ կամէր գործել զայնպլախ մեղս ՛  
կնոչ Տեառն իւրոյ :

Յաւուր միում մտեալ էր յովսէփ ՚ի տունն գործել  
ըզգործ ինչ , բուռն եհար յայնժամ կինն զձորձոց  
նորա և ասէ , կատարեալ զկամս իմ , իսկ նորա թողեալ  
զձորձս իւր ՚ի ձեռս նորա՝ փախուցեալ ել արտափս : Իսկ  
կինն ՚ի բարկուէ սրտին աղաղակեաց ՚ի ձայն բարձր ,

առ որ սպասաւորք տանն հասին փութանակի և լուան զչարաչար ամբաստանուի զյովսեփայ, որում և այր նորա ընծայեալ հաւատ և ոչ քննեալ զատայօդ բանս կը-նոցն սրտմտութ մեծաւ հրամայեաց արկանել զյովսէփ ՚ի բանտ :

45. Երիշու նէրքինից արքային գալուառնի ՚ի բանակն  
աւստաննեն զէլուակ :

՚ի բանտի անդ էին երկու ներքինիք արքային փարաւոնի, յորոց մին էր տակառապետ և միւսն մատակարար : Առ - քա երկոքին տեսին զերազ ՚ի միում գիշերի, մտեալ առ սոսա յովսեփայ ընդ առաւօտն, ետես զի խռովեալ էին+ ուստի եհարց զնոսա, ընդէ՞ր տրտում են երեսք ձեր այսօր : պատասխանի ետուն նոքա և ասեն, երազ տե-սոք, և ոչ ոք ՚ որ մեկնեսցէ մեզ զայն ասէ ցնոսա յով-սէփ, ոչ ապաքէն ՚ի ձեռս այ իցէ մեկնուի նոցա + պատ-մեցէք ինձ զերազսն ձեր :

46. Յովսէփ մէհնէ զէլուակն :

Յայնժամ սկսաւ պատմել առաջին ՚ի նոցանէ զերազ իւր այսպէս : Ժուկը ինձ ՚ի տեսլեան իմում, որժ մի առաջի իմ, և յորժն երեք ուռք՝ կանաչք յոյժ + ու-նէր զերիս ողկոյզս հասեալս, ողկոյզ խալողոց + եւ բա-ժակն փարաւոնի ՚ի ձեռին իմում, առնուի զխաղողն, ձմէի ՚ի բաժակն անդ և մատուցանէի նմա : Իարի եղիցի քեզ ասէ յովսէփ, զկնի երից աւուրց կացուսցէ զքեզ Փարաւոն անդէն ՚ի նմին տակառապետուի քում, ըստ առաջին իշխանուեն քոյ, այլ աղաչեմ զքեզ յիշես-ջի՞ր զիս առաջի փարաւոնի : Յետոյ սկսաւ պատմել յով-սիփայ զերազ իւր մատակարարն + ժուկը ինձ ասէ, թէ

Երիս լսանո նաշհւոյ ունէի ՚ի դլսի իմ և ՚ի վերնում  
լսանին յամէ , զոր ուտէր արքայ՝ գործ մատակարարաց ,  
և թռչունք ուտէին զնա ՚ի խանէ անտի . պատասխանի  
ետ յովսէփի՝ ոյս է մեկնուի երազիդ , յետ երից աւուրց  
բարձցէ փարաւոն զգլուխ քո ՚ի քէն , կախեսցէ զքեզ  
զփայտէ , և կերիցեն թռչունք զմարմին քո :

47. Աստաբրուեն էլլապացն ըստ Տէ՛հապէլեան Յակուէդայ :

Եւ եղեւ յաւուրն երորդի օր ծննդեան էր փարաւու-  
նի . և առնէր ուրախութի ամ ծառայից իւրոց : Յիշեաց  
յայնժամ արքայն զնախարարս իւր , որք էին ՚ի բան-  
տի : Եւ կացոց անդէն զտակառապետն յիշխանուել իւ-  
րում , իսկ զմատակարարն կախեաց զփայտէ , որպէս և  
մեկնեացն Յովսէփի : Բայց ոչ յիշեաց տակառապետն  
զՅովսէփ , այլ մոռացաւ զնա :

48. Ալլայն ծապաւուն առեստնէ պէլլապէ :

Յետ երկուց ամաց ետես Փարաւոն զերազ : Թռուէր  
թէ կայցէ յեզր գետոյ , և որպէս թէ ՚ի գետոյ անտի  
ելանէին եօթն երինջք գեղեցիկք և ընտիրք մարմնով  
և արածէին ՚ի խաղի անդ : Այլ ևս եօթն երինջք ե-  
լանէին յետ նոցա ՚ի գետոյ անտի . զազիրք և վտիտք  
մարմնով . և ուտէին զեօթն երինջսն գեղեցիկս տես-  
լեամբ և զընտիրս : Զարթեաւ փարաւոն և անդէն ե-  
մուա ՚ի քուն : Ետես զերազ եկդ անգամ . զի ահա եօթն  
հասկք ելանէին ՚ի միում փնջի , ընտիրք և գեղեցիկք .  
այլ ևս եօթն հասկք սինք և խորշակահարք ելանէին  
յետ նոցա և կլանէին զեօթն հասկսն՝ զընտիրս և  
զատոքս :

49. Տակառապէտն արքային յիշէ զՅովսէֆ առաջի նորութ

**Զ**արթեաւ փարաւոն յառաւօտու և խոլովեցաւ յոյժ  
յանձն իւր . ուստի առաքեալ կոչեաց զամ երաղահան-  
սըն եգիպտոսի և պատմեաց նոցա ղամ , զոր ինչ ետեսն ,  
բայց ոչ ոք էր , որ մեկնէր զայն : Խօսեցաւ յայնժամ  
տակառապէտն առաջի փարաւոնի և ասէ . զյանցանս իմ  
յիշեցուցանեմ այսօր . յորժամ ես և մատակարարն է -  
աք 'ի բանտի , տեսաք երկոքեանս ևս զերազ ՚ի միում  
դիշերի : Եշ անդ պատանի մի եբրայեցի ընդ մեզ , որ ե-  
մասուուք մեկնեաց մեզ զերազսն մեր , զի ոոկ և մեկնեացն ,  
նոյնալէս և կատարեցաւ :

50. Յովսէֆ Ֆէդէ զէլլան ֆարաւունի :

**Ա**ռաքեաց փարաւոն և կոչեաց զյովսէփ և պատմեաց  
նմա զերազսն իւր : Յայնժամ ասէ յովսէփ ցփարաւոն  
երկոքին երազք քո զմի և եթ ինչ նշանակեն : Եօթն ե-  
րինջքն գեղեցիկք՝ և եօթն հասկը գեղեցիկք եօթն ամք  
են բազում առատուե , որք եկեսցեն փուժով . խկ եօթն  
երինջքն տղեղք և վտիտք և եօթն հասկը ոսինք և խոր-  
շակահարք են եօթն ամք սովու , որ սպառեսցէ զամ եր-  
կիրս եգիպտոսի : Եւ արդ՝ արքայ՝ տես . ինդրեա զայր  
մի իմաստուն և խորհրդական , և կացուսցես զնա ՚ի վե-  
րայ տմ երկրիս եգիպտացւոց , զի ժողովեսցէ զամ կերակու-  
րըս եօթն ամաց բարեաց եկելոց ՚ի շտեմարանս արքու-  
նի , առ ՚ի պահել զկեանս ժողովրդեան ՚ի ժամանակս  
սովու :

51. Փարաւուն յանչն առնէ Յովսէդոյ զէլլեմուէ  
էգիպտոսի :

Կարի հաճոյ ժուեցան բանքն առաջի փարաւոնի , մինչև  
Կ

ասէ ցյովսէի , որովհետեւ եցոյց քեզ Ա՛ն զայդ տմ ,  
չիք ոք յԵգիպտոս իմաստնագոյն և խորհրդական առա-  
ւելքան զքենդ : Դու լիցիս իշխող՝ ի վերայ տան իմց ,  
և բերանոյ քում հնագանդ լիցի տմ ժողովուրդ իմ , բայց  
միայն աթոռութու 'ի վերոյ եղէց քան զքեզ : Յայնժամ  
հանեալ փարաւոն զմատանին իւր 'ի ձեռանէ իւրմէ՝ եղ՝  
'ի ձեռին յովսեփայ , զգեցոյց նմա զգատմուշան բեհե-  
զեայ , արկ զմանեակ ոսկի 'ի պարանոց ներա , և եհան  
զնա յերկըրորդ կառու իւր : Յովսէփ էր ամաց երեսնից ,  
յորժամ ընկալաւ զկատարի լիշխանուի յարքայէ անտի :

52. Յովսէփ Հայոն Էօլն ամացն ժողովը զբաղուց ցորէսաւ :

Եւ Յովսէփ յերեսաց փարաւոնի և շրջեցաւ ընդ-  
ամենայն երկիրս եղիպտոսի . և ժողովեաց զամենայն կե-  
րակուրս ամաց եօթանցն , յորս էր լիուի , վասն եօթն  
ամաց սովոյ :

Անցին եօթն ամբն լիուի և սկսան գալ եօթն ամք  
սովուն և խստանալ յամենայն երկիրն եղիպտացւոց :  
Եւ յայնժամ սկսաւ աղաղակել ամենայն ժողովուրդն  
առ փարաւոն վասն հացի , ասէ փարաւոն ցնոսա , եր-  
թայք առ յովսէփ . զի բացեալ նորա զամենայն շտե-  
մարանս ցորենոյ վաճառէր ամենայն եղիպտացւոցն :

53. Յոհովը առաջէ զորդէն իւր յԵգիպտոս 'ի գնէլ  
զցորեան :

Յամենայն աշխարհաց սկսան այնուհետեւ գալ յե-  
գիպտոս առ 'ի գնել զկերակուր . Նոյնպէս և Յակովը  
պաշարեալ գոլով 'ի պակասուէ հացին առաքեաց զոր-  
դիս իւր անդ գնել զհաց : Ապա իջին եզրարքն Յով-  
սէփաց . բայց զբենիամին զեղքայրն Յովսէփայ , որ միա-

մօր էր, ոչ արձակեաց ընդ եղբարսն նորա Յակովը, քան  
զի երկնչէր թէ, մի՛ գուցէ պատահիցէ նմա՞ի Ճանա -  
պարհի հիւանդուի : Մանաւանդ զի բենիամին ծնեալ էր  
'ի միոյ մօրէ ընդ յովսեփայ, վասն այն իսկ աւելի սկ -  
րէր զնա հայրն քան զայլ որդիս իւր :

54. • Յովսէփ ճանաչէ զէջը արք իւր, բայց ոչ յայտնէ  
շահնշն իւր նոցու :

Յետ այնորիկ եկեալ եղբարքն յովսեփայ պագապէին  
խոնարհ առաջի նորա 'ի վերայ երեսաց զերկիր : Իբրև  
ետես յովսէփ զեղբարսն իւր, ծանետ, բայց ոչ կտմե -  
ցաւ նոյնժամայն յայտնել նոցա զանձն իւր : Ուստի խօ -  
սեցու ընդ նոսա խստագոյնու և ասէ, ուստի՞ զայք, և  
վասն է՞ր . պատասխանի ետուն նոքա և ասեն . եկեալ  
եմք յերկրէն քանանացւոց գնել զերակուրս: Ո՛չ այդպէ  
է ասէ յովսէփ, այլ լրտեսք էք դուք, որք եկեալ էք զի -  
տել զել և զմուտ աշխարհիս : Եւ նոքա ասեն ո՛չ տէ՞ր,  
ոչ ինչ չար խորհուրդէ մեր, երկոտասան եղբայր եմք,  
որդիք առն միոյ յերկրին քանանացւոց . կրտսերն առ  
հօր իւրում է այսօր և միւսն չէ 'ի միջի :

55. • Յովսէփ նոցու առ ինչն զՅ հաւոն :

Զլինելն բենիամինի տնդ 'ի միտսին ընդ նոստ պատ -  
ճառեաց զմեծ թախծուի յովսեփայ . մինչ կամեցեալ 'ի  
ձեռս բերել զնա զիարդ և իցէ ասէ ցնոսա, եթէ արք  
խաղաղուեն էք՝ եղբայր մի 'ի ձէնջ աստ մնացէ առիս,  
մինչև ածիցէք աստ զեղբայրն ձեր զկրտսեր . իսկ դուք  
տարայք զվաճառ ցորենդ ձերոյ, որով հաւատարիմ լի -  
ցին բանք ձեր, ապա թէ ոչ մեռանիցէք : Յայնժամ  
ասեն իւրաքանչիւր ոք ցմիմեանս, այն, քանզի 'ի մեզս

եմք վասն եղբօր մերոյ , զի արհամարհեցաք զնեղութիւնուց նորա յորժամ աղաչէրն զմեղ , վան այսորիկ եկին ՚ի վերայ մեր այս չարիք : Ո՞չ դիտէին թէ լոէր Յունէփ , զի թարգման կայր ՚ի միջի . և անցեալ մեկուսի ՚ի նոցանէ՝ ելաց Յովսէփ :

56. Յունէ անէանէն էղբարհն Յովսէդոյ :

Հրաման ետ Յովսէփ լնուլ դամանս նոցա ցորենով և զնել զարծաթն իւրաքանչիւր ՚ի քրծի իւրում և տալ նոցի զպաշար վասն Ճանապարհի : Ապա արձակեաց զնոսա բաց ՚ի Ըմաւոնէ , զոր պահեաց առ իւր եւ այնպէս յուղի անկան եղբարքն յովսեփիայ , և յորժամ եկին առ հայրն իւրեանց , պատմեցին նմա զամենայն ինչ , որ անց ընդ նոսա : Եւ եղեւ ՚ի բանալն նց դքուրձս , իբրև տեսին զծրար արծաթոյ իւրաքանչիւր ոք ՚ի քրծի իւրում , զարմացան յոյժ ինքեանք և հայրն նոցա :

57. Յոհաննէ ո՛չ յօժարի տառաչել զնենիսմին :

Իբրև լուաւ Յակովը յորդւոց իւրոց , թէ խոստացեալ են նոքա տանել զբենիամին յեգիպտոս առ Տէրն երկրին , ասէ խոր թալիծութ , զիս անորդի արարիք . յովսէփ չլ ՚ի միջի , այլ մեռեալ է . զԸմաւոն թողիք յեգիպտոս , և զբենիամին կամիք տանիլ ընդ ձեզ :

Յիմ վերայ եկին այս ամ չարիք , ոչ առաքեցից զբենիամին ընդ ձեզ , զի եղբայր սուրբ մեռաւ . և սա միայն մնացեալ է . եթէ դէպ լինիցի և դմա հիւանդանալ ՚ի Ճանապարհին , զոր երթայցէք , իջուցանիցէք զծրութիւն իմ տրտմութ ՚ի դժուս :

58. Ուրիշն Յահովը առանց բենիամինի ո՛չ համեն  
գնալ յեգիպտոս :

Եւ եղեւ իբրև սպառեցին ուտել զցորեանն , զոր բե-  
րին յերկրէն եգիպտացւոց . ասէ յնոսա հայրն իւրեանց ,  
դարձեալ երթայք , գնեցէք սակաւ մի կերակուր : Պա-  
տասխանի ետուն որդիքն և առեն , ոչ կարեմք երթալ  
յեգիպտոս , զի այրն խօսեցաւ ընդ մեղ և ասէ , ոչ տե-  
սանիցէք զերես իմ եթէ ոչ եղբայրն կրտսեր ընդ  
ձեզ իցէ : Զի՞նչ չարեք հասուցիք ՚ի վերայ իմ , ասէ  
հայրն . զի՞ պատմեցիք առնն թէ գուցէ ձեր եղբայր :  
Եւ նորա ասեն՝ հարցանելով եհարց զմէնջ այրն և  
զաղգէ մերմէ և թէ տակաւին կենդանի իցէ հայրն  
ձեր . թէ իցէ՞ ձեր եղբայր . պատմեցաք նմա ընդ հար-  
ցելն նորա . միթէ գիտէամք թէ ասելոց էր ցմեղ՝ ածէք  
զեղբայրն ձեր :

59. Յահովը յօժանը առաքել պահենիամին :

Յայնժամ Յուղաս մին յորդւոց իլի , թի Յակովայ ,  
ասէ զհայրն իւր , արձակեալ ընդ իս զպատանեակդ : Ես  
առնում զդա եթէ ոչ ածից և կացուցից զդա առա-  
ջի քո՝ յանցաւոր եղէց զամ աւուրս կենաց իմոց : Զի-  
ջեալ ընդ բանսն յուդայի , ասէ , թէ այդպէս իցէ , ա-  
րարէք զայդ : Առէք ՚ի պտղոց երկրիս յամանս ձեր և տա-  
րայք առն պատարագս : Արծաթ կրկին առէք ՚ի ձեռս  
ձեր . և զարծաթն , որ դարձաւ յամանս ձեր՝ տարայք ը-  
ձեզ . զի արձակեսցէ ընդ ձեզ զեղբայրն ձեր զմիւս և  
զըենիամին :

60. Յահով հրանայէ պատրաստէլ զմաշ վասն եղ-  
բայր իւրոց :

Իբրև իջին արքն յեգիպտոս պատարագոքն իւրեանց ,

և կացին յանդիման յովսեփայ, ետես զնոսա յովսէփ և զքենիամին եղբայր իւր և նոյնժամայն սլատուէր ետ հազարապետի տան իւրոյ տանիւլ զարսն ՚ի տուն, զենուլ զգենլիս և պատրաստել զՃաշ : Տեսեալ արանցն եթէ տարան զնոսա ՚ի տուն Յովսեփայ, երկեան յոյժ, զի մի գուցէ վասն արծաթոյն, որ դարձաւ յամտն իւրեանց զառաջինն, առ ՚ի խուզել զնոսա տարան. մատուցեալ առ այրն՝ վերակացու տանն, ասեն • աղաչեմք զքեղ տէր, իջաք զառաջինն գնել կերակուրս, և իւրեւ հասաք յիջեվանս, բայցաք զամանս մեր • արծաթն իւրաքանչիւր յամանի մերում էր • արդ՝ զարծաթն զայն այսրէն կշռով դարձուցաք, և ոչ գիտեմք ով եղ զայն յաման մեր : Ասէ յնոսա վերակացուն, խաղաղուի ընդ ձեղ՝ մի երկնչիք, և եհան առ նոսա զԸ մաւոն :

### 61. Յովսէփ ընդ էջման իւր :

Եւ ապա եմուտ Յովսէփ ՚ի տուն, և մատուցին նմա զընծայսն, զոր ունէին ՚ի ձեռս իւրեանց և երկիրպագին նմա : Եհարց զնոսա յովսէփ, զի՞րդ կայք • ողջ իցէ արդեօք հայրն ձեր ծերունի, զորմէ ասացիք, թէ տակաւին կենդանի է : Պատասխանի ետուն նոքա՝ այն ողջ է հայրն մեր : Ամբարձեալ զաշ իւր յովսեփայ՝ ետես ըզ բենիսմին զեղբայրիւր զհամամայր . այդ է ասէ եղբայրն ձեր կրասեր՝ զորմէ ասացիք թէ էառ հայր մեր ՚ի տան անդը . եւ ասէ, Ա ողորմեսցի բեղ որդեակ : Խռովից յաւ Յովսէփ, գալարէին աղիք նորա ՚ի վերայ եղբօր իւրոյ և մտեալ ՚ի սենեակ ելաց անդը :

### 62. Յովսէփ հըստայէ հազարապէտի իւրու- 5 շնու- լ զամա- նչիք նոյտ հերահրով և զսիհն արծաթն ծածռ-ի պնէլ յո- 5 տանիք բնիտմին :

Լուացեալ յովսեփայ վերեսս իւր և պնդեալ զանձն

ել, և ասէ՝ արկէք զհաց : Արկին նմա միայնոյ՝ և նոցտ  
իւրաքանչիւր ումեք առանձինն : Կատաւ երէցն ըոտ երի-  
ցուե իւրում և կրտսերն ըստ կրտսերուե իւրում : յայն-  
ժամ ետ նոցա յովսէփ իւրաքանչիւրոց զմասունս և մե-  
ծացաւ մասն բենիամենի քան զմասունս ամցուն հնգա-  
պատիկ : Զինի Ճաշելոյ հրաման ետ Յովսէփ հաղա-  
րապետին իւրում զամանս արանցն լնուլ ցորենով և  
դնել զարծաթն իւրաքանչիւր 'ի բերան ամանոյ իւրոյ +  
և զսկիհն իւր արծաթեայ յամանի կրտսերոյն և զգինս  
ցորենոյ նորա : Եւ արար ըստ բանին յովսեփիայ՝ որպէս  
և հրամայեաց նմա :

### 63. Հաղաբապէտն Յովսէփոյ պնդէ զհէտ նոցա :

Ընդ այգանալ առաւօտու՝ արձակեցան արքն և իբրև  
չեւ ևս էին մեկնեալ 'ի քաղաքէ 'ի քաց, կոչեալ յովսէփ  
զհազարապետն իւր՝ ասէ, արի՝ պնդեամց զհետ արանցն +  
հաս և ասան ցնոսա, զի՞ է զի հատուցիք չար փոխանակ  
բարեաց . ընդէ՛ր գողացաք զսկիհն արծաթոյ : Իբրև ե-  
գիտ զնոսա, ասաց ըստ բանիցս այսոցիկ :

### 64. Սէհէն գտանի յամանի բենիտմէնի :

Պնդեցաւ հաղաբապետն զհետ արանցն և իբրև եգիտ  
զնոսա, ասաց նոցա որպէս և հրամայեաց նմա յովսէփի :  
Պատասխանի ետուն նոքա ցհազարապետն, ընդէ՛ր խօ-  
սիցի տէր զայդպիսի բանս . քան լիցի ծառայից քոց առ-  
նել զայդպիսի գործ, զի եթէ զարծաթն, զոր գտաք յա-  
մանս մեր՝ դարձուցաք առ ձեզ, զիանդ գողանայտք 'ի տա-  
նէ տեառն քոց զսկիհն : Եւ արդ՝ առ օրում գտցի 'ի ծա-  
ռայից քոց այն՝ մեռցի : Յայնժամ փուժացեալ իջու-  
ցին զբեռն իւրաքանչիւր 'ի դետին և բացին իւրաքան-

չիւր ոք զիւր աման . յուզեաց հաղարտպետն սկսեալ յերիցուէն մինչև ՚ի կրտսերն և եդիտ զսկիհն յամանի բենիամինի :

65 . **Եղբարիչ Յովենիոյ դատանան անդրէն ՚ի ժաղան :**

**Պատառեցին** նոքա յայնժամ զհանդերձս իւրեանց , և եդին իւրաքանչիւր զըեռն ՚ի վերայ իշոյ իւրոյ և դարձան ՚ի քաղաքն : Խմուտ յուդայ եղբարբք իւրովք հանդերձ առ յովսէփ և անկաւ տռաջի նորա ՚ի վերայ երկրի : **Ասէ** ցնոսա յովսէփ , զի՞նչ են իրքո , զոր արարիք : **Ասէ** յուդա , զի՞նչ տայուրք պատասխանի **Տ** , կամ զո՞ր իրաւունս ցուցանիցեմք . եդիտ տծ զյանցանս ծառայից . արդ՝ աւասիկ կտմք ծառայք տեառն մերոյ . մեք և առ որում սկիհն գտաւ : **Պատասխանի** ետ նոյա յովսէփ , քամ լիսի ինձ առնել զըսմնդ դայդ . այրն , առ որում սկիհն գտաւ՝ նա եղիցի իմ ծառայ և դուք դարձարուք ողջութ առ հայրն ձեր :

66 . **Յովենիոյ յօժարին ռւնիլ պինչն ՚ի ծառայութեան :**

**Մատեաւ Յուդա** առ Յովսէփ և ասէ , աղաչեմ տէր տնիւր հրաման ինձ խօսիլ բան մի տռաջի քո . հայր մեր սիրէր զպատանեակդ առաւել քան զամենեսին . իբրև դարձաք զառաջինն առ հայր մեր , պատմեցաք նմա զըսնըս տեառն մերոյ . ասէ , եթէ իջանիցիմք առանց կրտսեր եղբօր մերոյ՝ ոչ կարեմք տեսանել զերեսս առնն . յայնժամ ասէ հայր մեր ցմեղ . դուք ինքնին գիտէք զի զերկուս ծնաւ ինձ կին իմ . մին ել յինէն և ասացիք լեալ գաղանակեր . եթէ զստ ևս առնուցուք յերեսաց իմոց , և հանդիպեսցի սմա հիւանդուի ՚ի ճանապարհի

իջուցանիցէք զժերուի իմ տրտմուլ ՚ի դժոխս . զի իմ  
առեալ է յերաշխի զմանուկդ ՚ի հօրէ իւրմէ եթէ  
երթայցեմը առ հայր մեր առանց պատանեկի վախճա-  
նեցի : Եւ արդ՝ աղաչեմ զքեղ Տէր . կալ զիս փո-  
խանակ մանկանդ ստրուկ Տեառնդ :

67. Յուշէի առյ ճանաչել զննչն եղբարս իւրոց :

Ոչ կարաց Յովսէփ ժոյժ ունիլ առաջի ամյն շուրջ  
զնովաւ եղելոցն . որոյ վասն հրամայեաց մեկնիլ նոցա  
՚ի քաց : Չայն եթարձ նա լալով և ասէ յեղբարսն  
իւր , ես եմ յովսէփ . արդարեւ տակաւին կենդանի  
է հայր իմ . ոչ կարացին տալ նմա պատասխանի եղ-  
բարք նորա , քանզի խռովեցան յերեսաց նորա : Ասէ  
դարձեալ յովսէփ , մօ՛տ եկայք առ իս և չողան մօտ .  
Ես եմ յովսէփ եղբայրն ձեր , զոր վաճառեցիք դուք  
յԵղիպտոս : Բայց մի ինչ տրտմիք . և մի խիստ թուես-  
ցի ձեզ զի վաճառեցիք զիս այսր . քանզի ՚ի փրկութ  
առաքեաց զիս Աստուած առաջի ձեր :

68. Յուշէի ինուրէ յեղբարս իւրոց իջուցաննել զհայր  
իւր յԵղիպտոս :

Եւ անկեալ Յովսեփայ զպարանոցաւ բենիսմինի եղ-  
բօր իւրայ ելաց , նյնպէս և բենիսմին ելաց ՚ի վերայ  
պարանոցի նորա : Ապա համբութեաց զամն եղբարս իւր  
և ելաց զնոսա . յետ այնորիկ խօսեցաւ նա ընդ նոսա ,  
փութալ ելանել առ հայր իւր և ասել . որդի քո յով-  
սէփ այսպէս ասէ , արար զիս Աստուած Տէր ամենայն  
երկրիս եղիպտացւոց . արդ եկ՝ էջ առիս և բնակե-  
ցիս յերկրիս Գեւեմ . եղիցիս մօտ առիս . դու և որ-  
դիք քո և որ ինչ քո իցէ :

69. Փարաւոն պապուելիք առաջէլ պընծայս և զայշ  
առ Յակովը :

**Հ**նչեցաւ համբաւն ՚ի տան փարաւոնի , թէ եկին եղ-  
բարք յովսեփայ . ուրախ եղեւ փարաւոն և ասէ յօվսէփ  
ասաւ ցեղարս քո , զի լցուցեն զբեռնո իւրեանց և եր-  
թայցեն յերկիրն քանանացւոց և առեալ զհայր իւրեանց  
և զստացուածո՛ եկեսցեն առիս , ես տաց նոցա յիմ բա-  
րուեցս եղիպտացւոց . տուր զայս հրաման , զի տանու-  
ցուն յերկրէս եղիպտացւոց սայլս մանկանց և կանանց  
իւրեանց , և առեալ զհայր իւրեանց ածցեն այսր . մի տգա-  
հեացին աչք նոցա ՚ի կահս իւրեանց , զի բարուի թմ երկ-  
րիս եղիպտացւոց նոցա լիցի : Արար յովսէփի ըստ բա-  
նիցն փարաւոնի , որպէս հրամայեաց նմա :

70. Որդիք յահովլուայ աղդ առանեն հօք իւրեանց պատ-  
եմայ և է հենդանի է նմա :

**Ե**ղբարքն յովսեփայ ելին յեղիպտոսէ և չողան յեր-  
կիրն քանանացւոց առ հայրն իւրեանց յակովը . պատ-  
մեցին նմա , թէ որդին քո յովսէփ կենդանի է և է իշ-  
խան թմ երկրին եղիպտացւոց : **Զ**արմայաւ յակովը լը  
միտս իւր , քանզի ոչ հաւատայր նոցա . իւրեւ խօսեցան լը  
նմա զամ ինչ զոր ասաց յովսէփի և տեսեալ զսայլսն զա-  
ռաքեալսն ՚ի յովսեփայ՝ ասէ , մե՛ծ է ինձ եթէ արդարիւ  
կենդանի իցէ տակաւին որդի իմ յովսէփի . երթայց տե-  
սից զնա մինչ չե՛ մեռեալ իցեմ :

71. Յահովլու չուէ յէգիպտոս ընդանեօնն հանդերէ :

**Չ**ուեաց իսրայէլ ինքն և որդիք իւր և թմ որ ինչ իւր  
էր . մինչդեռ չեւ ևս էր հասեալ յերկիրն գեսեմ  
առաքեաց զյուդա առ յովսէփի , գալ նմա ընդ առաջ

եւ յովսէփ ընդ առաջ իլի հօր իւրոյ կառօք , և իբրև  
յանդիման եղեւ նմա՝ անկաւ զպարանոցաւ նորա և  
ելաց լալիւն մեծ : Եւ ասէ ինչ յյովսէփ + մեռաց  
այսուհետեւ որովհետեւ տեսի զերեսս քո՝ վետակաւին  
կենդանի ես :

72. Յովսէփ աղբ առնե արքայի պատշաճնե հօր իւրոյ :

Աղբ աբար յովսէփ Փարաւոնի , և ասէ . Հայր իմ  
և եղբարք իմ և ամ գերդաստան նորա եկին յերկրէն քա-  
նանացւոց . և ահա են ՚ի գեսեմ . և առեալ լիւր յեղ-  
բարց իւրոյ հինգ այր , կացոց զնոսա առաջի փարա-  
ւոնի : Ասէ փարաւոն յեղբարսն Յովսեփաց , զի՞նչ  
գործ է ձեր . նոքա ասեն , հովիւք խաշանց եմք , մեք և  
հարքն մեր : Յայնժամ ասէ փառաւոն յյովսէփ . Հայր  
քո և եղբարք քո եկին առ քեզ . ահա երկիրս եղիպ-  
տացւոց առաջի քո է . ՚ի բարւոք տեղւոջ երկրիս  
բնակեցն զհայր քո և զեղբարս քո : Ապա թէ զիտես  
եթէ իցեն ՚ի նոսա արք զօրաւորք , կացն զնոսա իշխան  
՚ի վերայ խաշանց իմոց :

73. Յովսէփ ածէ պահովէ զհայր իւր առ քարտաճն :

Ած յովսէփ զյակովք զհայր իւր առ փարաւոն և կա-  
ցոց առաջի նորա , եւ օրհնեաց զնա փարաւոն : Ասէ  
փարաւոն ցյակովք , քանի՞ ին ամք աւուրց կենաց քոց ,  
ասէ ցնա յակովք , աւուրք կենաց իմոց , յորս պանդիստե-  
ցայ՝ հարիւր և երեսուն ամ է . սակաւք և դժուարինք  
եղեն աւուրք ամաց կենաց իմոց , և ոչ հասին յաւուրս  
կենաց հարց իմոց : Օրհնեաց յակովք զփարաւոն և եւ  
՚ի նմանէ : Եւ բնակեցոց յովսէփ զհայրն իւր և զեղ-  
բարս իւր , և ետ նոցա բնակութիւն յերկրին եղիպտաց-

ւոց ՚ի բարւոք երկրի . եւ տայը ոռջիկս հօրն և եղբարց  
իւրոց , և ամ տան հօր իւրոյ ցորեան ըստ բերան :

74. Յահիսլե ենդրէ նազէլ պունի իւր ՚ի գեղեղմանէ  
հարց իւրոց :

Եկաց յակովը յերկրին եգիպտացւոց ամս եօթն և  
տասն : Եւ եղեն աւուրք կենաց յակովը հարիւր և քա-  
ռասուն և եօթն ամ . իբրև մերձեցան աւուրք նորա մե-  
ռանելոյ , կոչեաց զորդի իւր զյովսէփ և ասէ , եթէ գտի շր  
նորհս առաջի քո , դիր զձեռն քո ընդ երանօք իմովք , և  
արասցես ՚ի վերայ իմ ողորմուի և շշմարտուի , չժաղել  
զիս յեղիպտոս : Այլ ննջեցից ընդ հարան իմ , և բարձ  
ցեն զիս յեղիպտոսէ , ժժաղել զիս ՚ի գերեզմանի նոցա :  
Պատասխանի ետ նմա յովսէփ , ես արարից ըստ բանի  
քում : Ասէ յակովը՝ երդուեաց ինձ , և երդուաւ նմա :

75. Յահիսէփ ածէ զմանինուն իւր առ յահիսլե , զի օլհ -  
նեացէ զնոսաւ :

Իբրև ետես իսրայէլ զորդիսն յովսեփայ՝ ասէ , ոյք են  
սորտ . ասէ յովսէփ ցհայրն իւր , որդիք իմ են , զորս ետ  
ինձ Ած աստ . ասէ յակովը , մատն առ իս զլոսա , զի  
օրհնեցից . եւ առեալ յովսեփայ զերկուս որդիսն իւր ,  
զԵփրեմ ՚ի ձախմէ իսրայէլի , և զՄանասէ յաջմէ . մա-  
տոյց զնոսա առ նա . եւ ձգեալ իսրայէլի զաջ ձեռն իւր՝  
արկ զգլսովն եփրեմի , և նա էր կրտսեր , և զձախն զգըլ-  
լսովն մանասէի , և փոփոխեաց զձեռն , զի մանասէ էր ան-  
դրանիկ . եւ օրհնեաց զնոսա : Տեսեալ յովսեփայ ժէ  
արկ հայրն զաջ իւր զգլսովն եփրեմի , ծանը ժուեցաւ  
նմա , և օգնեաց ձեռին հօրն իւրոյ , հանել զնա ՚ի գլխոյն  
եփրեմի՝ ՚ի գլուխն մանասէի . ոչ կամեցաւ հայրն նորա

այլ ասէ՝ գիտեմ որդեակ, գիտեմ, դա եղեցի ՚ի ժողովուրդ և դա բարձրացի . այլ եղբայրս դորա կրտսեր եղեցի մեծ քան զդա, և զաւակ սորա եղեցի ՚ի բազմուն աղդաց : Եւ եդ զեփրեմ յառաջ քան զմանասէ :

### 76. Յոհանն Առաք յերկրին Քանանացւոց :

Եւ դադարեաց յակովը ՚ի պատուիրելոյ որդւոցն իւրոց, և առեալ զոտսն իւրանդրէն ՚ի մահիճսն՝ զրաւեցաւ ՚ի կենաց : Անկաւ յովսէփ ՚ի վերայ երեսաց նորա և ելաց զնա համբուրելով . հրաման ետ ծառայից իւրոց դիազարդաց, պատել զգին . եւ ապա ել յովսէփ ժաղել զհայր իւր եղբարբքն և համօրէն տամբ իւրով հանդերձ կառօք և հեծելովք . բարձեալ զգին տարան յերկիրն քանանացւոց և ժաղեցին զնա անդ յայրին կրկնում, զոր ստացաւ Աքրահամ ՚ի ստացուածս շիրմի, և դարձան յեգիպտոս :

### 77. Յոհանն Տիկիւարէ զեղբարս իւր :

Իբրև տեսին եղբարբքն յովսեփայ ժէ մեռաւ հայրն իւրեանց, ասեն՝ գուցէ ոխս ունիցի ընդ մեզ յովսէփ, և հատուցանիցէ մեզ հատուցումն ընդ ամ չարեացն, զոր անցուցաք ընդ նմա : Եկին առ յովսէփ և ասեն, հայր քո երդնեցոց զմեզ մինչեւ վախճանեալ էր նորա . այսպէս ասասաջիք, ասէ, յօվսէփ, ժողցես դոցա զյանցանս և զմեզս իւրեանց : Եւ արդ՝ ներեւու յանցանաց մերոց : Ասէ յովսէփ ցնոսա, մի երկնչիք . քանզի և ես այ եմ, դուք խորհեցայք զինէն ՚ի չարուի, և ած խորհեցաւ վսիմ ՚ի բարուի : Ասէ ցնոսա յովսէփ, մի երկնչիք՝ ես կերակրեցից զձեզ և զտունս ձեր, և միշի ժարեցան նոքա :

### 78. Յոհանն Տեսաննէ :

Եկաց յովսէփ ամս հարիւր և տասն . խօսեցաւ ընդ

եղբարս իւր և առէ . ես աւասիկ մեռանիմ . երդմնեցուցանեմ զձեզ յայցելուեն, յորում այց արասցէ ձեղ Աստուած, հանջիք և զիմ ոսկերս : Վախճանեցաւնա ամաց հարիւր և տասանց . և եղին զնա 'ի տապանի յեգիպտոս :

79 . Ձ հնի Տահուան յովուեփայ շարշարին ուստիեն իւրայէլէ :

Ուրիեն Ելի բազմանային և զօրանային յոյժ . և թիւ բազմութեան նոցա աչաքեկ առնէր զեզիպտացիս : Եկաց այլ թագաւոր, որ ոչ զիտէր զյովսէփ և ոչ յեշէր զարդեանց նորա : Կացոյց սա 'ի վերաց նց գործավարս, զի չարչարեսցեն զնոսա ՚ի գործ խիստ . և հրաման ետ ամ ժողովրդեան իւրում, զի զամենայն արու, որ ծնանիցի յերայեցւոց՝ 'ի գետ ընկեսցեն . և զամնէգ ապրեցուցեն :

80 . Մովու ծնանի յամ 2453 պէնէ սպեղծան Ռի .

Այր ոֆն յազդէն զեեայ, որ էառ իւր կին 'ի դըստերաց անախ զեեայ, յզացաւ և ծնաւ արու . տեսին զնա կայտառ, և թագուցին զնա զամիսս երիս : Իբրև ոչ ևս կարէին թագուցանել, էառ մայրն զոտապանակ մի պըրտուեայ և ծեփեաց զայն կալրաձիւթով և եղեալ յայն զմանուկն, ընկեաց զայն առ ափն գետոյն : Դիմէր քոյրն նորա 'ի հեռաստանէ տեսանել թէ զի՞նչ անցք անցանիցեն ընդ նմա :

81 . Մանուէն հանէ 'ի չըրյ .

Եջ Դուստր վարաւոնի լուանալ 'ի գետն, և նա ժիշտք նորա շրջէին առ գետովն : Տեսեալ նորա զտա-

սլանակն ՚ի խոզի անդ , տռաքեայ զմի ՚ի նաժշտաց  
անտի առնուլ զնա • զի լայր ՚ի տապանակի անդ , խան-  
գաղատեցաւ զնովաւ դուստրն փարաւոնի և ասէ .  
՚ի մանկանց եբրայեցւոց է դա : Ասէ քոյր մանկանն  
ցդուստր փարաւոնի , կամի՞ս զի կոչեցից քեզ կի՞ն մի  
դայեակ յեբրայեցւոց անտի , զի սհուցանիցէ քեզ զմա-  
նուկդ . և նա ասէ Երթ . դնաց աղօիկն և կոչեաց զմայր  
մանկանն : Ասէ դուստրն փարաւոնի՝ առ զմանուկդ և  
սնն ինձ զդա . և ես տաց քեզ զվարճս քո : Խառ կի՞նն  
զմանուկն՝ և սնոյց զնա : Իբրև մեծացաւ մանուկն ,  
առ զնա առ դուստրն փարաւոնի , և նա որդեգրեաց  
զնա և անուանեաց զնա մովսէս . դր . հանեալ ՚ի ջըց :

82. Աստուած էրեւի հռչեսի ՚ի լեռին Քորեէ :

Յարածելն մովսիսի զիսաշինս յոթորայ աներոյ իւ-  
րոյ , մերձեցաւ յանապատ և եկն ՚ի լեառն Աստուածոյ  
Քորեք : Երեւեցաւ նմա հրեշտակ Տեառն բոցով հրոյ  
՚ի միջոյ մորենւոյն և նա տեսանէք զի մորենին վառէր-  
բայց ոչ այրէք : Ասէ մովսէս անցեալ տեսից զտեսիլն զայն  
մեծ . իբրև մերձեցաւ առ այն , կոչեաց զնա Տէք ՚ի  
միջոյ մորենւոյն , մովսէս մովսէս , մի մերձենար այսր ,  
լոյն զկօշիկս յոտից քոց , զի տեղիդ , յորում կաս դու-  
երկիր սնւրը է : Ասէ Տէք յմովսէս , տեսանելով տե-  
սի զչարչուրանս ժողովրդեան իմոյ , որ յեգիստոս . իջի  
փրկել զնոսա ՚ի ձեռաց եղիպտացւոց և հանել զնոսա  
յերկրէն յայնմանէ :

83. Ասէսէս յանչն առնու հանել զինդայէլացին յէգիո-  
սոսեցաւ Տէք ընդ մովսիսի և ասէ ; ահաւստիկ աղո-

ղակ որդւոցն իլի հասեալ է առխ . արդ՝ գնան առ  
փարաւոն արքայ եգիպտացւոց հանել զժողովուրդ իմ  
յերկրէն եգիպտացւոց . զկնի խոստովանելոյ զինքն ա-  
նարժան և անկար առնելոյ զայն գործ մեծ . յանձն  
էառ և եմուտ առ փարաւոն և ասէ . այսպէս տսէ Տէր  
Աստուած իլի , արձակեա զժողովուրդ իմ . որում ետ  
պատասխանի փարաւոն , ով է նա , զի լուաց ձայնի նը  
և արձակեցից զորդիսն իլի : Ոչ գիտեմ զՏէրն և  
զին ոչ արձակեմ : Ճանկացեալ մովսիսի հանդարտել  
զխատուի փարաւոնի արար զբաղում և զմեծամեծ հար-  
ուածս և նշանս , որք կոչին հարուածք եգիպտոսի : Տե-  
սեալ փարաւոնի զայսպիսի հարուածս դեռևս ոչ մեղ-  
կացաւ արձակել զնոսա . վայ եհար Տէր զանդբանիկս նո-  
րա և զամենայն անդբանիկս յերկրին եգիպտացւոց : Եւ  
ապա զահի հարեալ փարաւոնի՝ կոչեաց զմովսէս և զԱ-  
հարոն , և ասէ . ելէք ՚ի ժողովրդենէ իմմէ , դուք և  
որդիքն իլի :

### 84. Իսրայէլացիք չուեն յէգիպտոսէ :

Եւ էին արք հետեակը վեցհարիւր հազար . թող  
զմանկտին և զբաղում խառնիջաղանջս , որք չուեցին  
յեգիպտոսէ ՚ի սոկըօվթ : Առաջնորդէր նոցա Աստուած  
յերեկ սեամբ ամպոյ , ցուցանել նոցա զջանսապարհն .  
և ցայդ սեամբ հրոյ , լուսատու լինել նոցա ՚ի գնալն :  
Զկնի սուղ ինչ ժամանակաց մերձեցան առ ծովեղըն .  
և հարին անդ զետրան իւրեանց :

### 85. Մական բաժանէ զհոնն :

Իբրեւ աղդ եղեւ փարաւոնի , թէ փախեաւ ժողո-

վուրդն , ստրջացաւ՝ զի արձակեաց զնոսա ՚ի ծառայութ անտի . և ապա հանդերձեալ զկառա իւր՝ պնդեցաւ բազմութ մեծաւ զհետ նոցա , եկն և եգիտ զնոսա բանակեալս առ ծովելերբն . ինքն ևս բանակեցաւ անդ ՚ի թիկանց նոցա : Տեսեալ որդւոցն իլի զինքեանս երկուստէք յարհաւիրս , երկեան յոյժ :

Յայնժամ ասէ Տէր յմովսէս , առ դու զգաւազան քո և ձգեան զձեռն ՚ի վերայ ծովուն և բաժանեան զօռւրսն , զի որդիքն իլի անցցեն ընդ ծովն իբրև ընդ ցամաք :

86 • Իսլայէլացնէն անցանեն ՚ի մէջ ծովուն ընդ ցամաք :

Արար մովսէս որպէս և պատուիրեաց նմա Տէր . ձգեալ զձեռն իւր ՚ի վերայ ծովուն՝ դարձոյց զծովն ցամաք : Մտին որդիք իլի ընդ մէջ ծովուն ընդ ցամաք և եղեւ ջուրն պարիսպ ընդ աջմէ նոցա և ընդ ահեկէ : Պիդեցաւ արքայն զհետ նոցա զօրութ իւրով , չզանգի տեալ անցանել ընդ մէջ հերձեալ ծովուն :

87 • Եգիպտացնէն հեղինուն ՚ի ծով :

Յորժամ սինդեցան եգիպտացիք զհետ իսրայէլացւոց ընդ մէջ ծովուն , կապեաց Տէր զանիւս կառաց նոցա , և վարեր զնոսա բռնութ : Զահի հարեալ եգիպտացւոց՝ փախեան յերեսաց իլի : Յայնժամ ասէ Տէր յմովսէս . ձգեան զձեռն քո ՚ի վերայ ծովուդ , զի կարկատեսցի անդրէն ջուրդ : Եւ իբրև ձգեաց մովսէս զձեռն իւր ՚ի վերայ ծովուն դարձաւ նոյնժամայն ջուրն ՚ի տեղի իւր . և հեծան եգիպտացիք ՚ի ծով անդը կառօք և հեծելով իւրեանց հանդերձ , և ծածկեցան ամ զօրութիք փարաւոնի և ապրեցաւ իհլ ՚ի ձեռաց Եգիպտացւոց :

88 • Աստուած հելլակը զժողովուրդ իւր Տանտեսյեւ  
յանապատի անու :

իբրև եհաս ձայն տրտնջանաց լլի առ Տէր, ասէ  
ցմովսէս ահա ես տեղացից ձեզ հաց յերկնից : Եւ ե-  
ղև ընդ երեկոյսն, եւ լորամարգին և ծածկեաց զբա-  
նակն, նոյնպէս և ընդ առաւօտն՝ յիշանելն ցողցն շուրջ  
զբանակաւն, ահա 'ի վերայ երեսաց տնապատին՝ մանը  
իբրև զգինձ, սպիտակ իբրև զեղեամի 'ի վերայ երկրին :  
Ասէ ցնոսա մովսէս ժողովեցէք 'ի դմանէ, այդ է  
հայն, զոր ետ ձեզ Տէր ուտելց : Որդիքն խրայելի  
կերան զմանանայն զքառասուն ամ յանապատի անու :

'Ի պակասել ջրոյ յանապատի վերստին տրտնջեաց  
ժողովուրդն զմովսիսէ, որ բողոք բարձեալ առ Տէր՝  
ասէ, զի՞նչ արարից ժողովրդեանս այսմիկ : Հուսկ ա-  
պա ըստ բանի Տեառն . առեալ ընդ իւր 'ի ծերոց  
ժողովրդեանն և գաւազան 'ի ձեռին՝ մերձ եղև առ  
վէմի 'ի քորեբ . ուրանօր հարեալ զվէմի բզիսեցոց ան-  
տի զջուր, յորմէ արբ ժողովուրդն և զովացաւ :

89 • Աստուած պայ Տռկունի զօրէնն ՚ի լեռնն սինոյ:

Զ կնի երից ամսոց իջին խրայէլացիք 'ի լեառն սինայ .  
յետ ելից անտի իւրեանց յեգիպտոսէ . անդ Աստուած  
ետ նոցա զօրէնս սբանչելի եղանակաւ : Լսելի եղեն  
ձայնը և երեեցան փայլատակունք և տմալ միգախառն  
'ի վերայ լերին սինայի . և ձայն փողոյ հնչէր մեծաձայն .  
և լեառն ծխէր առհասարակ . մինչդի զարհուրեցաւ  
ամ ժողովուրդն, որ կայրն շուրջ զստորոտով լերինն սի-  
նայի: Եջ Տէր 'ի լեառն սինայ, և 'ի գլուխ լերին խօսե-

յաւ ընդ մովսիսի ընդ մէջ ամսլրոպաց և կայծականց:

90. Պատուելունք Աստուծոյ:

Այս են պատգամք, զորս ետ Աստուծոց իԵլացոց՝ ի լերինն սինայի: Ե՛ս եմ Տէր Աստուծոց քո, որ հանի զքեզ յերկրէն եգիպտացւոց՝ ի տանէ ծառայութ: մի ունիցիս քեզ զայլ Աստուծոց բաց յինէն: զի ես եմ Տէր Աստուծոց քո, մի առնուցուս զանուն Աստուծոյ քո՝ ի վերայ սնուեաց: Մի արասցես դու քեզ կուռս ըստ ամենայն նմանութ: Յիշեա սրբել զօրնշաբաթու, դր զկիւրակէս: Պատուեա զհայր քո և զմայր, զի բարի լինիցի քեզ և երկայնակեաց լինիցիս: Մի սպանաներ: Մի շնար: Մի զողանար: Մի սուտ վկայեր զընկերէ քումմէ: Մի ցանկանար կոչ ընկերի քո և մի ընչեց նը:

91. Ընկունք Խորանի և պատանուի:

Խուեցաւ Տէր ընդ Մովսիսի և ասէ, ասան ցորդիսն խորայելի, զի արասցեն խորան տասն վեղկեան և զվարագայր՝ ի բեհեզդյ մանելոյ, ՚ի կապուտակէ, ՚ի ծիրանւոյ, և ՚ի կարմրոյ: Նոյնպէս արասցեն տապանակ վկայութ, յորում դիցեն զվկայութիս, զորս տացէ Աստուծոց:

92. Մահ Տուշինի:

Իբրև ել Մովսէս յարաբովթ մովաբայ, եցոյ նմ Տը զտմ երկիրն, զօր, երդուեալ էր տալ հարց և զտւակի նորա: Տեսեալ միայն զերկիրն ՚ի հեռուստ, բայց ոչ մը տեալ յայն վախճանեցաւ այրս այս լցեալ հոգւով իմաստուե և սխրալի առաքինութ, զոր և լացին որդիքն իլի զաւուլս երեսուն: Եկաց ՚ի տեղի նորա Յեսու որդինաւեաց, յորոյ վերայ եղեալ էր Մովսէս զձեռն իւր յառաջագոյն:

93. Ի՞նչո՞յն լազար անդանեն ընդ գետի յորդանան :

Խօսեցաւ Տէր ընդ Յեսուայ և ասէ , պատուիրեած քահանայիցն զի առցեն զտապանակն ուխտի Տեառն , և գընասցեն յառաջագոյն առաջի ժողովրդեան : Չուեաց ժողովուրդն 'ի խորանաց իւրոց անցանել ընդ յորդանան և քահանայիքն բարձին զտապանակ ուխտին Տեառն . և իբրև անցանէին քահանայք , որք կրէին զտապանակն ուխտին , ոտք նոցա միտէին յեզր ջրոյն յորդանանու , և կացին ջուրքն որպէս պարիսպ միաձոյլք , անջրպետէլք : Կացին քահանայքն 'ի վերայ ցամաքի 'ի մէջ յորդանանու , և ամ որդիքն իսրայելի անցին ընդ ցամաք :

94. Յէսու հրամայէ ժողովրդէան առանուշ ՝ի գետոյ անտի պէտք էտառան չափին :

Իբրև վախճանեաց ամ ժողովուրդն անցանել ընդ յորդանան , պատուէր ետ յեսու արանց երկոտասանից ըստ հրամանի Տեառն բառնալ 'ի միջոյ յորդանանու զեր կոտասան քարինս իւրաքանչիւր ոք քար մի 'ի վերայ ուսոց իւրոց ըստ թուոյ ցեղիցն իսրայելի , և տանել զայն 'ի մէջ բանակին իւրեանց , զի լինիցին քարինքն այնոքիկ 'ի նշանակ յաւիտենական : Ասէ յեսու ցորդիսն իսրայելի , յորժամ հարցանիցեն զձեզ որդիք ձեր թէ զի՞նչ են քարինքս այսոքիկ , պատմեսջիք նոցա , թէ պակասից գետն յորդանան յերեսաց տապանակի ուխտի Տն՝ մինչ անցանէր ընդ յորդանան , և քարինքս այսոքիկ են 'ի յեշատակ 'ի մէջ որդւոյն իսրայելի մինչև ցյաւիտեան : Եւ ժողովուրդն 'ի յորդանանէ և բանակեցաւ 'ի գաղգաղա , և զերկոտասան քարինսն առեալս 'ի յորդանանէ , կանգնեաց անդ յեսու :

## 95. Պարսկական Երեխում Հռովծանի :

Քաղաքն երիքով փակեալ և ամբացեալ էր պարսպօք յերեսաց որդւոցն իսրայելի, զոր չէր նոցա հնար նուա - ձել : Ասէ Տէր յշեսու, ահա ես տամ՝ ՚ի ձեռս քո վերի - քով . բայց դու՝ առ զտապանակն և պատեա զնովլաւ զտմ մարտիկս շուրջանակի յոբելինաւն, ՚ի լսել զծայն եղջեր փողոյ և իբրև հարկանիցէք զփողն՝ պատեսջիք շուրջ գքա - զաքաւն միանգամ, այսպէս արասջիք զվեց օր, եօթն քա հսնայ առցեն զեօթնափողն եղջերեայս յոբելեան առա - ջի տապանակին, յաւուրն եօթներորդի պատեսջիք զքա - զաքն եօթն անգամ, և քահանայքն հարցեն զփողն և ամ ժողովուրդն աղաղակեսցէ, յաղաղակելն նորա կործա - նեսցին ինքնին պարիսալք քաղաքին : Եւ արարեալ ըստ բանից մն, տիրեցին քաղաքին, և զամենեսին ետուն ՚ի ձա - րակ սրոյ :

## 96. Յէսու նուտեան հառեցուցանէ զառեգոհն և պլու լին յըհնեացից եւ ըետնի :

Իբրև լուաւ թագաւորն երուսաղեմի, թէ էառ յե - սու Զգայի, կոչեաց յօգնուի իւր և զայլ հինգ թագա - ւորս զօրօք իւրեանց և գումարեալ զամենեսին ել ինքն և ամ ժողովուրդքն և պաշարեցին զԳրաբաւոն : Ասէ Տէր յշեսու, մի երկնչիր ՚ի նոցանէ, զի ՚ի ձեռս քո մատնե - ցից զնոսա : Ե՛հա ՚ի վերայ նոցա յեսույանկարծակի ըզ ցայցն ամ, և զարհուրեցոյց զնոսա Տէր յերեսաց իսրա - յելի և եթեկ զնոսա բեկութեած և հալածեալ ընդ ձա - նապարհ զառ ՚ի վայրին՝ կոտորեցին զնոսա որդիքն իսրայե - լի : Արկ Տէր քարինս կարկտի ՚ի վերայ նոցա յերկնից, ո - րով և մեռան բաղզումք ՚ի նոցանէ : Յայնժամ խօսեցաւ յեսու ընդ տեաւն, և ասէ, կացցէ արեգակն հանդէսլ

Գրաբաւոնի և լուսին հանդէսլ ձորոյն Եղոնայ, և կացին  
արեգակն և լուսին՝ ի կայի իւրեանց, մինչև էտո աճ ըլ-  
վրէժ ՚ի թշնամեաց նոցա :

97. • Յեսու նուտեան առնէ պիորայէլացին յէրէբն իսուսա-  
ցէալ . և ինչն մէտանի յամք 2570 պէտք ստէշտան աշխարհէ :

Մարտ եղեալ Յեսուայ ընդ բոլոր ազգս պաղես-  
տինացւոց . տարաւ և բնակեցոց զիսրայէլացիս ՚ի խոս-  
տացեալ երկրին . զդաշտսն և զքաղաքս նուածեալս բա-  
ժանեաց յեօթն մասունս . յետ այնորիկ մեռաւ յեսու  
և թաղեցաւ ՚ի սահմանս ժառանգուն իւրոյ : Զ կնի  
մահուան նորա արարին չար որդիքն իսրայելի առաջի  
Տեսուն՝ զի թողեալ զՏէր Աստուած հարց իւրեանց ,  
գնացին զհետ Աստուածոց օտարաց . և երկիր պազին  
նոցա : Ա այ սրտմառութ բարկացաւ Տէր իսրայելի և  
մատնեաց զնոսա ՚ի ձեռս աւարառուացն և աւերեցին  
զնոսա : Տեսեալ որդւոցն իսրայելի զքարկութիւն Տն ,  
դարձան առ Աստուած և պաշտեցին զնա , և խնդրէին  
՚ի նմանէ օդնութիւն , և գթացեալ ՚ի նոսա Աստուած ,  
ազտեաց զնոսա ՚ի ձեռաց թշնամեաց :

98. • Ա սփռած տուաչէ զԳրէդէռն ընդպէճ Մադիամացւոց :

Մենչդեռ զօրացեալ էր ձեռն Մադիամու ՚ի վերայ  
որդւոցն իսրայելի սակս չարութեան իւրեանց , աղաղա-  
կեցին առ Տը վասն Մադիամու . լուաւ Տը խնդրուա-  
ծոց նոցա : Երեւեցաւ գեղէսնի հրեշտակ Տեսուն ,  
և ասէ , Տը լը քեզ հզօր զօրութեամք : Պատասխա-  
նի ետ գեղէսն , եթէ Տը ընդ մեզ էր՝ լը էր զտին  
զմեզ ամենայն չարիքս այսոքիկ . ասէ հրեշտակ Տն ,

Էրթ զօրուք քով և փրկեսցես զիսրայէլ՝ ՚ի ձեռաց մա-  
դիամու : Նախ անկար խոստովանէր առաջի այ զանձն  
իւր առնելոյ զայնպիսի գործ մեծ , հուսկ ապա խնդրեաց  
յայ զերկոսին նշանս , որ կատարեցաւ նմա և հաւատաց  
թէ ՚ի ձեռն իւր փրկելոց է իսրայէլ :

99. • ԳԵՒԴԵՌԻ ԺԱՂՄԱՆԿ ԱՀՈՅՆ ԻՆՉ և իտղայ ընդդրէմ հա-  
ղիսացաց :

Կանխեալ գեղէոնի և ամ զօրն ընդ նմա , բանա-  
կեցաւ մերձ առ աղբիւրն արեդայ , յանդիման թշնա-  
մեաց իւրոց . բայց զօրաց մադիամու և ամաղեկայ , որ  
յեցեալ էին ընդ միմեանս , ոչ դոյր թիւ : Յայնժամ  
ասէ Տէր ցգեղէոն բաղում է զօրդ՝ որ ընդ քեզ . առ դու  
քեզ զարս երեք հարիւր , որք լափիցեն լեզուաւ զզուր , և  
զթացորդսն , որք ՚ի վերայ ծնկաց իւրեանց արբցեն , դար-  
ձն զնոսա յետս , զի մի դուցէ պարծեսցի իսրայէլ՝ և ասաս  
ցէ թէ ձեռն իմ փրկեաց զիս :

100. • ԳԵՒԴԵՌԻ յաղման հարկացաց :

Բաժանեաց գեղէոն զերեք հարիւր արս յերիս մասունս  
և ետ ՚ի ձեռս նոցա զփողս եղջերեայս և ջահս ՚ի մէջ սա-  
փորոցն և ասէ յնոսա . հարից ես զփողն և դուք ամենե-  
քեան՝ հարջիք շուրջ զամ բանակաւն : Եւ եմուտ գե-  
ղէոն ՚ի բանակին մադիամու գիշերայն և հարին զփողն  
երեքին մասունք , և խորտակեցին զսափորսն , իբրև լր-  
ւաւ բանակին մադիամու զձայն փողոյն , զշաջիւն և զշ-  
ուաչիւն երիլարաց՝ երկուցեալ յահէ անտի փախեաւ և  
դարձուցել զսուր իւր յինքն անձնասպան լինէր : Հուսկ  
ուրեմն պնդեցաւ գեղէոն զհետ արբային մադիամացւոց  
և կալեալ զնա կենդանւոյն գերեաց զնա և ապա հրա-  
ման ետ ՚ի սուր սուսերի հանել զնա :

## 101. Ապմիտն Ճնշոնք :

Յաւելին որդիքն իսրայելի առնել չար առաջի Տեառն.  
որոյ վե և մատնեաց զնոսա ԱՇ ՚ի ձեռսփղտացւոց. էր այր  
մի ՚ի սարաայ, որոյ անուն էր Մանուէ, և կին նորա ա-  
մուլ էր : Երեւեցաւ հրեշտակ Տեառն կնոջն, և տսէ .  
յլասցիս և ծնցիս որդի, բայց զգոյշ լեր չըմպել զգինի  
և զօղի և չուտել զթմ անսուրք, և ՚ի գլուխ մանկանն եր  
կաժմ մի ելցէ, զի ուխտաւոր այ եղիցի և նա փրկեսցէ  
զիարայէլ ՚ի ձեռաց փղտացւոց : ծնաւ կինն զորդի և կո-  
չեաց զանուննորա Սամփսոն . աճեցաւ մանուկն և օրհ-  
նեցաւ ՚ի Տեառնէ :

## 102. Ապմիտն այլէ պամ այլապէտոցն :

Հասեալ Սամփսոնի յարբունս հասակի, էառ իւր կը-  
նուե՛ ՚ի դստերաց անտի այլաղգեաց, զի առնուցու ՚ի նո-  
ցանէ զվրէժս . գնաց սա և կալաւ զերիս հարիւր աղուէ-  
սըս և առեալ ջահս՝ կապեաց զնոսա ընդ միմեանս ձետ ը-  
ձետ, և եղ զջահսն ՚ի մէջ երկուց ձետոց, և լուցեալ  
հուր ՚ի ջահսն՝ արձակեաց յո՛ք այլաղգեաց, և այրեաց  
զրայսն զյառաջագոյն հնձեալսն ՚ի բարդից ցկանգնաւո-  
րըն և մինչեւ ցագիս և ցձիժենիս . իբրև պնդեցան այ-  
լաղգիք զհետ սամփսոնի կապել զնա, եկն և եգիտ սամփ  
սոն ծնոտ մի իշոյ, էառ զայն և եհար նովաւ զհազար այր  
յայլաղգեաց անտի :

103. Ապմիտն իտիպահէն պէտունս չաղաքի իշշապահոցն  
առնէ պայն ՚ի գլուխ լէլլին :

Չոգաւ Սամփսոն ՚ի Գաղայ եւ ետես անդ զկին մի և  
եմուտ առ նա : Լոգդ եզւ դազպացւոց թէ եկեալ է այսը

Ասմիսոն . դարանակալ լեալ նմա զդիշերն ողջոյն առ  
դրսն քաղաքին , խորհեին սպանանել զնա : Ննջեաց  
Ասմիսոն և յարեաւ զմէջ գիշերաւն , թափեաց զդրունս  
քաղաքին հանդերձ սեմօքն և բարձեալ 'ի վերայ ուսոց  
իւրոց՝ եհան զայնս 'ի գլուխ լերին :

104 . Ան Սամհոռնէ մատնէ զնա 'ի չեռա այլապէտոց :

Յետ այսորիկ սիրեաց Ասմիսոն դկին մի , որոյ անուն  
էր Դալիլա : Ելին առ նա նախարարը այլազգեացն՝ և  
ասեն , պատրեան զայր քո , թէ ի՞ւ իցէ զօրութիւն նը ,  
կտմ ի՞ւ հնար է մեզ կապել զնա , և մեք տայուք քեզ  
այր իւրաքանչիւր հաղար հարիւր արծաթոց : Եւ եղե  
իբրև վտանկեաց բանիւք կինն զդիշերն ողջոյն և թա-  
խանձեցոց զնա , պատմեաց նմա ոսմիսոն զնամ 'ի սրաէ  
իւրմէ և ասէ , ածելի ո՛չ ելցէ 'ի գլուխ իմ : Լուեալ  
զայս կնոջն ննջեցոց զնա 'ի ծնկաց միջի , և կոչեալ զո-  
մըն 'ի վարսավիրաց անտի եգերծ զեօթն գիսակս գլխոց  
նորա , և նոյնհետայն բարձաւ 'ի նմանէ զօրութ նորա :  
Եւ կալան զնա այլազգիք և բրեալ զաչս նորա՝ կապե-  
ցին երկաթի կապանօք և արկին զնա 'ի բանտ : Յապա  
զկնի ժամանակաց սկսաւ մազ գլխոց նորա բուսանիլ  
յետ գերծելցն , և օրքան զօր յաւելանայր 'ի զօրութիս և  
սպասէր պարապոց , զի առնուցու զվրէժս յայլազգեաց :

105 . Սամհոռն մէռանին :

Իշխանք այլազգեաց ժողովեցան զոհել զոհ մեծ դակո-  
նայ ածոցն իւրեանց և ուրախ լինել , զի մատնեցաւ 'ի ձե-  
ռըս նց թշնամին իւրեանց : Եւ եղեւ երբեւ զուարթացան  
սիրտք նոցա կոչեցին զԱսմիսոն 'ի բանտէ , և կացու-  
ցանելով զնա 'ի մէջ երկուց սեանց՝ խաղային զնովաւ .

եղիտ յայնժամ՝ Ատմփսոն Հնարս բուռն հարկանելոյ զերկոցունց սեանցն միջնոց, յորոց վերայ հաստատեալ էր տունն, և յեցաւ ՚ի նոսա ասելով՝ մեռցի անձն իմ ը այլազգիս, և իբրև շարժեաց զօրութ զսիւնսն, անկաւ տունն ՚ի վերայ ամ նախարարաց և ՚ի վերայ համօրէն ժռ զովոյն, որ ՚ի նմա, և մեռոց զամենեսեան ընդ իւր :

## 106. Ասմուել Ճնշուի :

Այր մի էր յարիմաթեմայ, որոյ անուն էր Եղիանաս. էին նորա երկու կանայք և անուն միոյն աննայ, յորմէ ՚ի ժամանակս քահանայապետութն Հեղեայ ծնաւ նմա որդի և կոչեցաւ Աամուել : Իբրև հաստատեցաւ մանուկն, մատոյց Աննայ մայր մանկանն զմանուկն առ Հեղի, և ասէ, ես այն կին եմ, որ կացի յաղօթս առ Տէր վասն մանկանս այսորիկ, լուաւ Տէր զիսնդրուածս իմ . ահա տամ զսա Տեառն ՚ի փոխ զամ աւուրս կենաց իւրոց . և անդ երկիր սլաղին Տեառն : Մանուկն աճէր՝ և զօրանայր և հաճոյ էր Աստուծոյ և մարդկան, որոյ մայրն արարեալ կրկնոցս փոքրիկս տանէր նմա աւուրց յաւուրս յելանել ընդ առն իւրում զոհելզոհ : Հեղեայ էին երկու որդիք ժանտք և չարաբարոյք, որ ոչ Ճանաչէին զՏէր . և հայրն նոցա թողեալ էր զնոսա ՚ի կամս իւրեանց, յայս սակս բարկացաւ Աստուծած սրտմութ իւրով ՚ի վերայ Հեղեայ և որդւոյն նորա :

## 107. Աստուծ իօսի ընդ Ասմուելի :

Չե ես էր անցեալ Ճրագն Աստուծոյ ՚ի տաճարին, յորում ննջէր Աամուել . առ տապանակաւ Տեառն : Ճայն եղեւ ՚ի վերուստ ՚ի Տեառնէ որ ասէր սմուել՝ սամուել . և ընթացաւ սամուել առ Հեղի և ասէ,

աւասիկ եմ Տէր, զի՞ կոչեցեր զլա : Ասէ Հեղի, ոչ կո-  
չեցի զքեղ, դարձիր անդրէն որդեակ և ննջեաւ Յաւել  
Տէր միւսանգամ կոչել զնա, որում չե ես էր յայտ-  
նեալ բան Տեառն : Իսկ յերբորդում նուագի եկն ե-  
կաց Տէր 'ի վերաց, և գոչեաց առնա, սամուէլ սամուէլ,  
և նա ասէ՝ խօսեաց Տէր, զի լուիցէ ծառաց քո : Ասէ ցնա  
Տէր, ահա ես առնում զվորէժ 'ի հեղեաց վասն անօրէ-  
նուե որդւոց նորա զի հայհոյէին զլուսուած՝ և նա ոչ  
խրատէր զնոսա :

108 : Սամուէլ պապէ՛ Հեղէայ զլուսն Տեառն, զոր հո-  
նեցաւ Տէր ընդ նմա :

‘Ենջեաց Սամուէլ մինչեւ ցառաւօտ և կանխեաց ը-  
տուաւօտն բանալ զգրունս տան Տեառն ըստ սովորուե-  
իւրոյ : Բայց երկնէր պատմել հեղեաց : Կոչեաց զնա  
հեղի և ասէ, զի՞նչ է բանն, զոր խօսեցաւ ընդ քեզ  
Տէր . օ՞ն և օ՞ն արասցէ քեզ Աստուած, և օ՞ն և օ՞ն  
յաւելցէ եթէ զըան մի յամէ թագուսցես յինէն, զորս  
լուար : Պատմեաց նմա Սամուէլ զմմ բանսն, որում  
եա պատասխանի Հեղի, որ ինչ բարի է առաջի իւր  
զայն արասցէ Տէր :

109 . Որդէ՛ Հեղէայ մեռանէն, նոյն և ընդն Հեղի :

Ընդ աւուրսն ընդ այնոսիկ ժողովէին այլազգիք 'ի  
վերաց խրայելի պատերազմել ընդ նոսա . տեսեալ խ-  
րայելի զալարտուիս իւր առաքեաց բերել զտազանակ  
ուխտին Տեառն 'ի բանակն և կոչել զերկոսին որդիս  
հեղեաց զոփնի և զիենեհէս ընդ նմա : Ճակատեցաւ  
խրայէլ ընդ այլազգիս և ոչ կարացեալ յաղթել զօ-  
րուե նոյա և իւրաքանչիւր այր խրայելի փախեաւ 'ի

յարկս իւր ընկալեալ՝ ի նոյանէ զհարուածս մեծամեծս։  
Առաւ տապանակն Տեաւան և երկոքին որդիք հեղեայ մե-  
ռան ՚ի պատերազմի անդ, իբրև լուաւ հեղի զձայն գուժին  
անկաւ յաժոռոյն յետս ՚ի վայր, որով բեկաւ ողն նորա և  
մեռաւ։

110. Սաւուշ ընդունելու թագաւորը յան 2900 պէտք սահման  
հան աշխարհին։

՚ի ծերանաւ Սամուէլի՝ կայոց զորդիս իւր դատաւո-  
ըրս խրայելի, բայց նոքա ոչ դնացին զՃանապարհս հօր  
իւրեանց, այլ թիւրեցան ընդ այն զակատեալ զհետ զօշտ-  
քաղուե, յորմէ հրապուրեալ առնուին զկաշառս և թիւր  
ըէին զերաւունս, յայս սակս ժողովեցան արք խրայելի  
և ասեն ցամաւէլ, աւադիկ դու ծերացար և որդիք քո  
ոչ պնան զՃանապարհս քո, արդ՝ կացն ՚ի վերայ մեր  
թագաւոր դատել զմեզ։ Չար թուեցաւ բանն, զոր ասա  
ցին նմա և ջանացը շրջել զմիտս նոցա յացապիսի դիտա-  
ւորուէ, սակայն հաստատեալ էին նոքա ՚ի խորհուրդս իւ-  
րեանց։ Հուսկ ուրեմն առեալ սամուէլի հրաման յայ  
լսել բանից ժողովրդեանն էջ՝ ՚ի խնդիր նոցա և ընտրեց  
զաւուզ թագաւոր նոցա։ Եւ սաւուզ էր այր բարի,  
գեղապատշաճ, անձնեայ և թիկնաւէտ։

111. Սամուէլ հշարամնէ պՍաւուշ։

Ժողովեցան այլազդիք ՚ի պատերազմ ընդդէմ խրայե-  
լի բազմութ կառաց և հեծելոց, որք և ելին բանակեցան  
՚ի մաքմաս ։ սաւուզ գտանէր դեռ ևս ՚ի գալզաղաց և  
դադարեաց զեօթն օր վկայուե որպէս և ասաց սամուէլ  
բայց ոչ եկն սամուէլ և ցրուեցաւ ժողովուրդն իւր ՚ի  
նմանէ ։ յայնժամ եհան սաւուզ զողջակէզս։ Եւ իբրև

կատարեաց մատուցանել զայն, եկն սամուէլ և ել նա ը-  
տուած նորա օրհնել զնա . ասէ սամուէլ, վլ՛նչ գործե-  
ցեր, և նա ասէ, տեսի զի յրուեցաւ ժողովուրդ իմ յե-  
նէն, և դու ոչ եկիր 'ի վկայուե՛ աւուրս, զոր ուխտեցերն,  
երկեայ՝ զի գուցէ իջանիցեն այլազգիք 'ի վերայ իմ: Ա-  
սէ սամուէլ 'ի զուր է քեզ չպահել զպատուիրանս իմ,  
զոր պատուիրեաց Տէր . արդ՝ մի կացցէ թագաւորուի-  
քո, փոխանակ զի ոչ պահեցեր զհրաման Տեառն :

112. • Յովեալ-ան Տպանէ ՚ի բանահն զաշացւոց ընդ հա-  
պալմահը իւրաւ և հարիանէ պահան :

Յաւուր միում յովեալթան որդին Սաւուղայ էառ զպա-  
տանին իւր զկապարճակիր և եմուտ 'ի կիրճս այլազգեաց  
և եհար զնոսա . կապարճակիրն ևս տայր ստէպ զհետ նո-  
րա, առաջին հարուածք յովեալթանու, որովք եհար  
իբրև զքսան արս նետիւք և բռնաքարամքք : Եղե յայն-  
ժամ խռովուի մեծ 'ի բանակին և ահ 'ի տեառնէ . իբրև  
լուաւ սաւուղ զազազակ այլազգեացն, ել ինքն և ամ  
ժողովուրդն ընդ նմա մինչեւ յապատերազմ : Եւ ամ իսրա  
յէլ, որք թագուցեալք էին 'ի լերին . իբրև լուան թէ  
փախեան այլազգիք, նոքա ևս զհետ նոցա պնդեցան 'ի  
պատերազմ :

113. • Սաւուղ սպառնաց պմոհ ոլորտոց իւրաւ Յովեա-  
լ-ան :

Մինչ զեռ յրուեալ էր պատերազմ ընդ քաղաքոն,  
նզովեաց Սաւուղ յաւուր յայնմիկ զժողովուրդն, և ա-  
սէ, անիծեալ լիցի մարդն, որ կերիցէ հաց մինչեւ յե-  
րեկոյ : Անդ էր անտառ մեղուաց հանդէպ անդոյ և սնցա  
նէր զօքն 'ի մեղուանոցէ անտի : Լուեալ յովեալթանու

եթէ երդմնեցոյց հայր իւր զժողովուրդն , կտրկառեաց զծագ գաւաղանին որ ՚ի ձեռին իւրում , և եհար ՚ի խորիսիս մեղու և մերձեցոյց զձեռն իւր ՚ի բերանն . կտմեցաւ սաւուղ ելանել ընդդէմ այլազդեաց և եհարց զան , սակայն աճ ոչ արար նմա պատասխանի . ասէ սաւուղ մատուցեք այսօր զամ ազդս խրայելի և տեսցուք թէ վթ հյը եղեն այսօր չարիքս այսոքիկ . կենդանի է տէր , զի եթէ վասն յովամթանու որդւոյ իմոյ , ապա մահու մեռցի :

#### 144. Սաւուղ անորդէ յԱՀասուծոյ :

Եւ ասէ սամուէլ ցաւաւուղ , արդ՝ լուր ձայնի պատգամաց Տեառն . երթ և հար զԱմազէկ , բայց զամ որ ինչ նորա իցէ մի տպրեցուցանիցես յառնէ մինչեւ ցկինն . եւ լեալ սաւուղ զօրուլ իւրով եհար զամազէկ և կալաւ զթագաւորն նոցա կենդանւոյն և զամ ազդն կոտորեցին սրով սուսերի : Սակայն բարկացոյց սաւուղ զՏէր , զի էանց զբանիւնորա և ապրեցոյց զթագաւորն կենդանի և էառ զընտիրս յաւարաց անտի : Յայս սակս ընտրեաց Տէր ՚ի թագաւոր զԴաւիթ ՚ի տիս մանկուն փոխանակ սաւուղայ և հրամայեաց սամուէլի առնուլ զեղջիւր իւղոյ և օծանել զնա թագաւոր :

#### 145. Սաւուղ հանդեպէ այսոյ չորսաց :

Ա երացաւ ՚ի սաւուղայ հողի Տեառն և խեղդէր զնայս չար , յայնժամ ասեն ցնա ծառայք իւր , խնդրեսցի Տեառն մերում այր մի որ գիտիցէ երդել քնարաւ , զի ՚ի հասանել ՚ի վերայ քո այսոյն չարի , երդեսցէ նաև զիւր լիցի քիզ : Առաքեաց սաւուղ զհրեշտակս զի ածցեն զԴաւիթ որդի Յեսսեայ , որ գիտէր երդել զսաղմասս , և էր այր իմաստուն , հանճարեղ և զեղեցիկ տեսլեամբ : Եւ յորժամ հասանէր այսն չար ՚ի վերայ

նորտ, առնոյր Դաւիթ ղքնարն և նուազէր, որով  
հանդ խստ մասուցանէր սաւուղայ և առնէր նմա դիւր :

146. Գրալեակ նորդուէ զոհ յիշըայէլացւոց ճահառէլ ընդ  
նմա :

Ճողովեցան այլազգիք 'ի բանակաց իւրեանց և ե-  
լին ընդ դէմ խրայելի : Նոյնպէս ասւուղ և արք խ-  
րայելի ժողովեցան 'ի հովիտան և ճակատեցան ընդդէմ  
նոցա 'ի պատուերազմ :

Եւ 'ի ճակատէ այլազգեացն այր զօրաւոր, որոյ տ-  
նուն էր Գողիադ + այր բարձրահասակ և սաղաւարտ  
'ի գլուխ, զգեցեալ զգրահս, սոնապանք պլնձիք 'ի վե-  
րայ բարձից նորտ և վահան պլնձի 'ի վերայ թիկանց  
նորտ : Սա եկն եկաց, ձայն ետ 'ի ճակատն խրայելի  
և ասէ, ընտրեցէք դուք ձեզ զայր մի, զի ելցէ պայքա-  
րել ընդ իս, եթէ կարասցէ նա հարկանել զիս եղիցուք  
մեք ձեզ 'ի ծառայս, ապա թէ ես հարից զնա, դուք  
եղիջիք մեզ 'ի ծառայս : Եւ ասեն խրայէլացիք ցմի-  
մեանս եթէ գոյցի 'ի մէնջ այր այդպիսի, որ սպանանի-  
ցէ զնա, մեծացուցչ յոյժ զնա արքայ մեծութ, և  
զդուսուր իւր տացէ նմա կնուե :

147. Դրաւել էլանէ ընդդէմ Գրալեակու :

Յայնժամ խօսեցաւ Դաւիթ ընդ արսն, որ շուրջ  
զնուլաւ և ասէ, զի՞նչ արասցէ արքայ առն, որ հարկանիցէ  
զայլազգին զայն, և բառնայցէ զնախտինս յխրայելէ :  
Լու եղեն սաւուղայ բանքն, զոր խօսեցաւ Դաւիթ,  
զոր և էառ սաւուղ առ ինքն : Ասէ Դաւիթ յԱտուղ  
ես երթայց և եղից մարտ ընդ այլազգւոյն ընդ այնմիկ-  
ասէ Սաւուղ, գուցէ ոչ կարիցես կոուել ընդ նմա, զի

դու մանուկ ես, և նա այր քաջասիրտ և պատերազմօղ։  
**Պ**ատասխանի ետ նմա դաւիթ, և ասէ, յարածելն  
իմ զլսաշխնս հօր իմոյ, յորժամ գայր առիւծ կամ  
արջ, և առնոյր զռչխար ՚ի հօտէ անտի իմմէ ելանէի  
զհետ նորա՝ և հարեալ զառիւծ կորդէի ՚ի բերանոյ նո-  
րա զռչխարն և եթէ յառնէր գաղան ՚ի վերայ իմ, կո-  
լեալ զփողից նորա՝ հարկանէի և սպանանէի զնա։ **Տէր**  
**Ա**ստուած՝ որ ապրեցոյց զիս ՚ի ձեռաց առիւծուն և  
արջոն, նոյնն ապրեցուացէ զիս ՚ի ձեռաց այլազգւոյս ։  
**Ասէ** սաւուղ, երթ՝ **Տէր** եղիցի ընդ քեզ :

118. Դաւիթ առնուա զհինգ քարինս և պատրի իւր :

**Զ**գեցոյց սաւուղ Դաւիթի զվարապանակս իւր, և  
սաղաւարա պղնձի ՚ի գլուխ նորա, որով զըահաւորեալ  
դաւիթի ած զսուսեր իւր ընդ մէջ։ և ՚ի գնալն զթեաց  
միանգամ և երկիցս։ **Ասէ** դաւիթ ցսաւուղ ոչ կա-  
րեմ երթալ սոքօք՝ զի չեմ հմուտ։ և ապա բարձին  
զայնս ՚ի նմանէ։ **Առեալ** զցուալ իւր ՚ի ձեռն՝ ընտ-  
րեաց զհինգ քարինս ողօրկս և եդ զայնս ՚ի հոլուական  
մախաղին և զպարսն ՚ի ձեռին իւրում մերձեցաւ առ  
այրն այլազգի :

119. Դաւիթ հապանէ զգլուան Դաշնակու :

**Ի**բրեւ հայեցաւ այլազգին ՚ի դաւիթ, որ էր խար-  
տեաշ և գեղեցիկ արհամարհեաց զնա, իբրեւ զպատանի  
տպիկար։ ասէ յնա **Գողիադ**, զի է այդ զի՞ ցպուլ և  
քարամբք դաս ՚ի վերայ իմ, միթէ շնուն իցեմ ես։  
**Ասէ** դաւիթ ցայլազգին, դու դաս ՚ի վերայ իմ որով,  
զեղարդեամբ և ասպարաւ, այլ ես դամ ՚ի վերայ քո  
անուամբ **Տէտոն** զօրուեց Ճակատուս իսրայելի, զոր

նախառեցեր գու այսօք . եւ 'ի Ճակատելն նոցա ընդ մի -  
մեանս , ձգեաց դաւիթ զձեռն իւր 'ի մախաղ և էառ ան -  
տի զքար մի , և ալաբամքարեաց զգողիադ , որ անկաւ 'ի  
վերայ երեսաց իւրոց յերկիր . նոյնժամայն ընթացաւ  
դաւիթ առ դին և առեալ զսուսեր նորա եհատ զգլուխ  
նոլա . իւրեւ տեսին այլազգիք թէ մեռաւ զօրալարն իւ-  
րեանց փախեան . յարեան արք իսրայելի և յուդա , աղա  
զակեցին և յարձակեցան դհետ նոցա ցլսկաղջն :

#### 120 . Սաւաւազ նուանն չէ ընդ Դաւիթ :

Եւ եղե 'ի մտանելն նոցա իւրեւ դարձաւ դաւիթ 'ի  
սպանանելց զայլազգին , ելին պարաւորք ընդ առաջ դաւ-  
իթի յամքալամքաց խրացելի երգել՝ պար առնուլ ուրա -  
խուր ընդ առաջ սաւուզայ արքայի , թմբկօք և ծնծղա-  
յիւք . նուադէին կանայք խաղալիկք և ասէին , սաւուզ  
եհար զհտզարօ և դաւիթ զքիւրս : Զ չարեցաւ սաւուզ  
վասն բանից այնոցիկ և ընդ ակամք հայէր յօրէ յայն-  
մանէ և առյապա : Զ կնի այսր ամի ոդի յովիաթանու  
կապեցաւ ընդ ոգւոյն դաւիթի և սիրեաց զնա , ուխ-  
տելով նմա սիրել զնա իւրեւ զանձն իւր . մերկացաւ յով  
նախթան զլօդիկ իւր և ետ զայն դաւիթի . նոյնպէս ետ նը-  
մտ զվարապանակս իւր , զսուսեր , զաղեզն , զկամար և  
զկապարճս իւր :

#### 121 . Սաւաւազ զշանայ զնուապինուն իւր :

Ասէ սաւուզ ցդաւիթ , աւասիկ տաց զգուստը իմ  
երէց քեզ կնուի , եթէ լինիցիս ինձ յորդի զօրուի և  
պատերազմեսցիս զպատերազմաւնս Տեառն : Ասէ ցնա  
դաւիթ , ով եմ ես՝ զի լինիցիմ փեսայ արքայի : Պատ  
ուիրեաց սաւուզ ծառայից իւրոց , զի խօսեցին ընդ

նմա լռելեայն, թէ ոչ կսմի արքայ վարձանս, այլ հա-  
րիւր անթլփատուի այլազգեաց, զի ևորհէր արկանել  
զնա ՚ի ձեռս այլազգեաց : Յարեաւ դաւիթ և զնաց ին-  
քըն և արք իւր, և եհար ՚ի նոցանէ արս հարիւր և եբեր  
զանթլփատուիս նոցա, և փեսայացաւ արքայի :

122. Սաւուզ Աշխաժանէ զԴաւիթ :

**Ծ**անեաւ սաւուզ թէ Տէր ընդ դաւիթի է, և ամ իս-  
րայէլ սիրէ զնա . յաւել ևս ակնածել ՚ի նմանէ, և եղեւ  
թշնամութ ընդ նմա զամ աւուրս կենաց իւր : Խօսեցաւ  
սաւուզ ընդ որդւոյ իւրում յովնաթանու և ընդ ամ ծա-  
ռայս իւր սպանանել զգաւիթ : Իբրև լուաւ յովնաթան  
զայն՝ պատմեաց դաւիթի, թէ հայր իմ խնդրէ սպանա-  
նել զքեղ, զգնյշ լեր և կալ զքեղ ՚ի թաքստի . լուեալ  
սաւուզայ թէ պատմեաց յովնաթան զգաւաճանուի իւր,  
որ առ դաւիթ, բարկացաւ ՚ի վը նորա, և ասէ, ես ոչ  
զիտեմ, զի դաշնաւոր ես դու որդւոյն յեսսեայ, արդ՝ ա-  
ռաքեամ՝ կալ զպատանին, զի որդի մահու է նա : Պատաս-  
խանի ետ յովնաթան հօր իւրում և ասէ, ընդէ՞ր մե-  
ռանիցի, զի՞նչ չար գործեաց : Հուսկ ուրեմն տուաքեց  
սաւուզ զհրեշտակս ՚ի տուն դաւիթի ունիլ զնտ առ իւր  
՚ի սպանանել զնա ընդ առաւօտն + պատմեաց նմա մեղքող  
կին իւր՝ և ասէ, եթէ ոչ ապրեցուսցես զանձն քո ՚ի գի-  
շերիս այսմիկ՝ վաղիւ մեռանելոց ես, և իջուցեալ զնա  
ընդ պատուհանն, փախեաւ և ապրեցաւ :

123. Դաւիթ ինայէ ՚ի Սաւուզ :

Իբրև պնդեալ էր սաւուզ զհետ դաւիթի արամբք իւ-  
րովք, եկն հրեշտակ առ նա և ասէ, փութամ՝ եկ այսր,  
զի յարձակեցան այլազգիք յերկիրս մեր, և նա չոգաւ ը-

ԴԵՄ այլազգեայն : 'Ի դառնալ նոշա անտի , աղդ եղեւ  
նմա , թէ դաւիժ յանապատի անդ է . առեալ ընդ  
իւր զերխ հազար արս ընտրեալս յամ իսրայելէ , գնաց  
խնդրել զնա և զորս ընդ նմա . եկն 'ի պառակս հօտից և  
եմուտ սաւուղ հանգչիւ անդ , յայնժամ ասեն ցդաւիժ ,  
որք ընդ նմա էին , ահա այսօր է , զորմէ ասաց Տէր ցքեղ ,  
մատնել զժշնամիս քո 'ի ձեռս քո , արա որպէս և հաջոյ  
ժուի յաշս քո + յարեաւ դաւիժ և եհատ գաղտ զտը-  
տուն լօդկի սաւուղայ : Ասէ դաւիժ յարս իւր , քաւ լի-  
ցի ինձ , միել 'ի նա զձեռն իմ , զի օծեալ տեառն է . հա-  
ճեալ դաւիժի զտրսն իւր բանիւրք ոչ թոյլ ետ նոցա լս-  
պանանել զնա :

#### 124. Մահ Սաւուղայ :

'Ի պատերազմել այլազգեաց ընդ իսրայելի փախեան  
արք իսրայելի յերեսաց նոցա , և հասին 'ի սաւուղ և  
յորդիս նորա . ծանրացաւ պատերազմն 'ի վերաց սաւու-  
ղայ և վերաւորեցաւ յաղեղնաւորաց կորովեաց . ասէ սա-  
ւուղ ցկապարճակիր իւր , մերկեա զսուր քո և խոցեա  
զիս , գուցէ գայցեն անժլ փատքն և խոցոտիցեն զիս  
և խաղացեն զինեւ . եւ ետես կապարճակիրն թէ մեռաւ  
սաւուղ՝ անկաւ և ինքն 'ի վերաց սուսերի իւրոյ և մեռաւ :

#### 125. Գրաւիլ սղբայ զՍաւուղ և զՅունական :

Յետ աւուրն երկրորդի ահա այր մի եհաս ՚ի բանա-  
կէն զօրուն սաւուղայ , հանդերձք նորս պատառեալ , և  
հող զգլեսով , և մտեալ տու դաւիժ տակ , փախեաւ ժո-  
ղովուրդն 'ի պատերազմէն . իսկ սաւուղ և յովնաթան  
մեռան . իբրեւ լուսւ զայս դաւիժ պատառեաց զհան-  
դերձս իւր , և ամ արք ընդ նմա կոծեցան մինչեւ ցերե-

կոյ ՚ի վերայ սաւուղայ և յովաթանու : Եկին արք հը-  
րէաստանի և օծին անդը զդաւիթ թագաւոր ՚ի վերայ  
տանն յուղայ , և պատմեցին նմա , թէ արք յԱբիսայ  
թաղեցին զսուուղ և զօրդիս նորա ՚ի լերինն գեղըուտ ,  
առաքեաց հրեշտակս առ նոսա և ասէ , օրհնեալ էք դուք  
՚ի Տեառնէ , զի ցուցիք դուք զդութն զայն ՚ի վերայ աետոն  
ձերոյ , արդ՝ արտացէ Տէր ընդ ձեզ ողորմուի և Ճշմար-  
տուի , և ես հատուցից ձեզ ընդ բարութեանն :

126. Դաստիւ Բշշնչէ էլէննանէ :

Առաքեաց դաւիթ զյուլաբ և զամ խրայէլ զի սա-  
տակեսցեն զորդիսն ամոնայ . եւ եղեւ ընդ երեկս յա-  
րեաւ դաւիթ յանկողնոյ իւրմէ , և զդնայր ՚ի վերայ տա-  
նեաց իւրոց , ետես անտի զկին մի լուացեալ , և զեղե-  
ցիկ յոյժ տեսլեամբ , որոյ անուն էր Ռերսաբէ կին  
ուրիայ քետացւոյ : Առաքեաց դաւիթ զհրեշտակս և առ-  
զնա և ննջեաց ընդ նմա . խակ այր նորա էր ՚ի բանակի  
անդ և ծառայէր հարազատուլ հայրենեաց . եւ եղեւ ը-  
առաւուն , զրեաց դաւիթ հրովարտակ առ յովաբ և տ-  
սէ , մատոն զուրիս ընդդէմ սաստկացեալ պատերազմին  
և դարձնիք դուք ընդ կրունկն ՚ի նմանէ , զի հարցի նա  
և մեռցի :

127. Առաջած առաքէ առ Դաստիւ կ'Եպիւնն  
Տաղանդէ :

Յայնժամ առաքեաց Տէր զնաթան մարգարէ առ դա-  
ւիթ և ասէ , արք երկու էին ՚ի քաղաքի միում , մին մե-  
ծատուն , և միւսն աղքատ . մեծատանն էին հօտք և ան-  
դեայր բազում յոյժ , սցլ աղքատին որոջ մի փոքրիկ ,  
զըր ստացեալ էր և սնուցեալ և հաստատեալ ընդ նմա :

Եկն անցաւոր առ այրն մեծատուն , խնայեաց առնուլ ՚ի  
հօտից իւրոց առնել կերակուր հիւրոյն անցաւորի եկելոց  
առնա և էառ զորոջ աղքատին և արար նմա կերակուր:

128. Մարգարիտ յայտնէ Դատելի պատկանին իւր :

Բարկացաւ սրտմտուլ դաւիթ առնն յոյժ , և ասէ  
կենդանի է Տէր զի որդի մահու է այրն , որ արար զայն և  
զորոջն տուժեսցէ եօթնպատիկ + ասէ ցնա նաթան , դու  
ես այրն , որ արարեր զայն + այսպէս ասէ Տէր Ածիւրա-  
յելի , ես եմ՝ որ օծի զքեղ թագաւոր ՚ի վերայ ամ իւրա  
յելի , ես փրկեցի զքեղ ՚ի ձեռաց սաւուզաց , ետու քեղ  
զտուն Տեառն քո և զիսրայէլ , ընդէ՞ր անարգեցեր զբան  
Տեառն առնել չար առաջինորա : Սպաներ զուրիա քե-  
տացի սրով թշնամեաց , և զինն նորա առեր դու քեղ  
կնուե . յայնժամ զզչացաւ դաւիթ և ասէ ցնաթան ,  
մեղաց Տեառն , և նա ասէ անցոյց Տէր զքեղ զմեղսքո՝ և մի  
մեռցիս , բայց որդին քո՝ որ ծնանելոց է քեղ՝ մահու  
մեռցի :

129. Մահ Տանիկան Դատելի :

Եհար Տէր զմանուկն , զոր ծնաւ կինն ուրիացի և հի-  
ւանդացաւ . խնդրեաց դաւիթ յայ վասն մանկանն , պա-  
հեաց պահու և եմուտ անկաւ ՚ի վերայ գետնոյ , յաւուր  
եօթներորդի եղեւ մեռանիլ մանկան , և երկեան ծառայք  
իւր պատմել նմա . իբրև լոււաւ դաւիթ զշշնջիւն ծառա-  
յից իւրոց , եհարց ցնոսաւ . եթէ մեռեալ իցէ մանուկն  
և նոքա ասեն՝ մեռաւ , և դաւիթ նոյնժամայն յարու-  
ցեալ ՚ի գետնոյն , լուացաւ և օծաւ , և եմուտ ՚ի տուն այ  
երկրպագանել Տեառն , և տպա խնդրեաց ուտել զհայ .  
ասեն ցնա ծառայքն նորա , զի՞նչ է բանդ այդ , զոր արա-

Եր . մինչեւ կենդանի էր մանուկն՝ պահէիր և լայիր , և իբրև մեռաւ . յարեար ուտել և ըմպել . ասէ ցնոսադաւիթ , մինչդեռ կենդանի էր՝ պահէիր և լայիր , զի հնար էր ըստ ողորմուն տեառն կեալ մանկանն . իսկ այժմ որովհեաւ մեռաւ , ես ընդէ՞ր պահիցեմ , միթէ կարօղ իցեմ դարձուցանել զնա այսրէն :

130 . Աշխաղոց ապագայնէն ՚ի հօրէ եւ զնա ՚ի Դրաւեն :

Յետ այնորիկ ել աբեսաղոմ կառօք և երիվարօք և յիսուն այր սուրհանդակ առաջի իւր , և ՚ի կատարիլ չորից ամաց , ասէ ցհայր իւր դաւիթ . երթայց և հատուցից զուխտս իմ , զոր ուխտեցի տեառն , որում ետ պատասխանի արքայն , Երթ խաղաղութ . յարեաւ աբեսաղոմ , զնաց ՚ի քերըն : Եւ ապա առուքեաց աբեսաղոմ պատուիրակս յամ ցեղս խրացելի , և ասէ , ՚ի լսել ձեր զծայն եղջեր փողոց , ասասջիք եթէ թագաւորեաց աբեսաղոմ ՚ի քերըն . և եղեւ ժողով սաստիկ և ժողովուրդ բազում երթայց ընդ նմա : Եհատ գուժկան առդաւիթ և ասէ , եղեւ սիրտ արանց խրացելի զհետ աբեսաղոմայ . ասէ դաւիթ ցամ ծառայս իւր , որ ընդ նմա , օ՞ն արիք փախիցնեք յերեսաց նորա , զի մի փութայեալ հարկանից զմեղ սրով սուսերի : Փութացաւ արքայ ելանել և ամ տուն նորա հետիոտս , և եկաց առ լերինն ձիթենեաց :

131 . Դրաւեն հայնէլի Բենի անտիգանաց :

Եկն արքայ դաւիթ մինչև ցբաւուրիմ , և ահա ելանէր անտի այր յազգականուն սաւուզայ , անուն նորա Սեմի , ելաննելով ելանէր և անիթանէր ։ Տ ձգէր զքարինս դաւիթի , և ամենեցուն որք ընդ նմա : Միոմն ՚ի ծա-

ոայից իւրոց մատեաւ առ նա և ասէ , ընդէ՞ր այսպէս անիծանէ շուն մի մեռեալ զտէր իմ զարքայ , անցից և առից զգլուխ նորա : Պատասխանի ետ դաւիթ , թոյլ տուք նմա անիծանել այնպէս , թերեւս տեսցէ Տէր զաւապանս իմ , և հատուացէ ինձ բարիս փոխանակ անիծից նորա յաւուրս յայսմիկ :

432 . Դաւիթ զօդաժողով լինի ընդդիմ Աբեսաղոնայ :

Եմուտ աբեսաղոմ և ամ իսրայէլ ընդ նմա յիմ . և եկաց անդ աւուրս ինչ , զորմէ աղջ եղեւ դաւիթի և արար հանդէս զօրուն , և կայոց ՚ի վերայ նոցա հարիւրապետս և հաղարապետս և բաժանեալ զնոսա յերիս առաջս առաքեաց ընդդիմ աբեսաղոմայ . ասէ դաւիթ ցզօրս իւր , ելանելով ելից և ես ընդ ձեղ , պատասխանի ետուն նոքա , ոչ , զի դու ես իբրև զտասն հաղարս ՚ի մէնջ . լաւ է թէ դու ՚ի քաղաքի իցես՝ զի լինիցիս մեղ յօդնականուի : ՚ի վախճանի պատուէր ետ արքայ յովաբայ և այլոց զօրավարաց իւրոյ՝ և ասէ , խնայեսջիք ՚ի պատանեակն իմ Աբեսաղոմ :

433 . Աբեսաղոն հակէ զծառոց :

Յաւուր յայնմիկ պարտեցաւ զօրն իսրայէլի , և եղեւ խորտակումն մեծ մինչեւ անկանել քսան հաղար արանց : Դիպեցաւ աբեսաղոմայ առաջի ծառացից դաւիթի հեծեալ ՚ի ջորի իւր մտանել ը մեծ և թաւ կաղնեաւ , ուրանօր պատեալ հերք գլխոյ նորա ընդ կաղնեաւն կախեցաւ զծառոյն հերօքն և անց ՚ի ներքոյ նորա ջորին յայնկոյս :

434 . Մահ Աբեսաղոնայ :

Ետես այր մի զաբեսաղոմ կախեալ զկաղնւոյն և

պատմեաց զայն յովաբայ , որում ետ պատասխանի  
յովաբ թէ ընդէ՞ր ոչ հարեր զնա ը գետին , զի ես  
ունէի տալ քեզ այսօր զյիառն սիկլ արծաթոյ և ըղ-  
սուսեր մի : Ասէ այրն յյովաբ , ոչ ապաքէն պատաւի-  
րեաց արքայ յականջս ձեր զդուշանալ պատանեկին  
աբեսաղոմայ . մի ինչ վնաս առնել անձին նորա :  
**Չանսացեալ յովաբայ բանիցն , էառ զերիս նետս , և**  
արձակեաց զայնս 'ի սիրտ աբեսաղոմայ , և մինչդեռ  
կենդանի էր 'ի կազնւոջն , պատեցան զնովաւ տասն ման-  
կունք 'ի զինակբացն յովաբայ , և հարեալ զնա սպա-  
նին չարաշար :

## 135 • Դաստիարակութեալ պատմութեալ :

Մինչդեռ նստէր դաւիթ ընդ մէջ երկոցունց դրանց  
և սպասէր լրոյ զօրաց և որդւոյ իւլոյ , եկն գուժկան  
և ազդ արար նմա զյաղթութէ թշնամեաց , ասելով  
աւետիք Տն իմոյ արքայի , զի արար քեզ Տ՛ իրաւունս  
այսօր 'ի ձեռաց ամ յարուցելոց 'ի վերայ քո : Ասէ  
յնա արքայ , ողջին իցէ մանկան իմոյ տբեսաղոմայ ,  
պատասխանի ետ գուժկանն՝ եղիցին իբրև զմանուկն  
թշնամիք Տն իմոյ , և ամ յարուցեալք 'ի վերայ քո 'ի  
չարութիւն , ըստ խռովեցաւ արքայ , ել 'ի վերնատուն  
դրանն և ելաց 'ի ձայն բարձր , աբեսաղնմ , աբեսաղնմ  
որդեակ իմ աբեսաղոմ , ու տայր ինձ զմահ փոխանակ  
քո . Ես փոխանակ քո աբեսաղոմ որդեակ իմ , որդեակ  
իմ աբեսաղոմ :

## 136 • Մահ Դաստիարակութեալ :

Յայնոսիկ ծերացեալ էր դաւիթ և ան-  
եալ զաւուրբք : Կոչեաց նա զքհնյս և զմարգտրէս ,

և ասէց ցնտսա՛ առեկք ընդ ձեզ զծառայս , և հեծուցեալ զսաղովմօն զորդի իմ՝ ի ջորի իմ , իջուցեկք զնա ՚ի գեհոն օճանել զնա ՚ի թագաւոր՝ ի վերայ իսրայելի , և փող հարեալ եղջերաւն ասասջիբ՝ կեցյէ արքայ սաղովմօն . ելջիք զկնի նորա , մասցէ և նստցի յախոռ իմ , և նա թագաւորեսցէ ընդ իմ . արարին ըստ բանիցն արքայի , և սաղովմօն նստաւ՝ յախոռ դաւթի հօրն ամաց երկոտասանից ՚ի կենդանուեն հօր իւրոյ . եւ եղեւ իբրև դադարեաց դաւթիթ՝ ՚ի պատուիրելոյ սաղովմօնի որդւոյ իւրում , ննջեաց ընդ հարս իւր , թագաւորեալ ամս քառասուն :

137 • Ասդովմօն ինդրէ յԱՀաթուծոյ զեմասպաւմբւն :

Երեւեցաւ Տէր սաղովմօնի ՚ի քուն գիշերոյ , և ասէ , խնդրեած դու քեզ խնդիր ինչ : Ասէ սաղովմօն , Տէր Ած իմ , դու եղեք զծառայքո փոխանակ դաւթի հօր իսոյ , ես եմ մանուկ փոքր , և ոչ գիտեմ զել և զմուտ իմ . տուր ծառայի քում զսիրտ լսելոյ և դատելոյ զժողովուրդ քո արդարութ , խելամուտ լինիլ ՚ի մէջ բարւոյ և չարի , քանզի ո՞ կարէ դատել զայս ժողովուրդ քո զծանը : Հաճոյ թուեցաւ բանն առաջի Տեառն և ետ նմա սիրտ իմաստուն և հանճարեղ , և զօր ոչն խնդրեաց՝ զմեծութիւն և զփառս :

138 • Կանոյս էրիուս գոն ՚ի պատ տուոջն Ասդովմօնին :

Եկին երկու կանայք առ արքսոյ և կային առաջի նորատսէ մին ՚ի նոցանէ՝ յիս Տէր իմ , ես և կինս այս էաք ՚ի միում տան , ծնայ ՚ի տան անդ , եղեւ յաւուրն երբորդի ծնաւ և կինս այս , մեռաւ որդի սորա ՚ի գիշերի , քանզի ննջեաց ՚ի վերայ նորա , և յարուցեալ ՚ի հասարակ գիշերի , էառ զմանուկ իմ . ՚ի գրկաց իմոց ՚ի ծոց իւր , և յոր-

Ժամ՝ աղախին .քո՞ի քուն էր , զորդին իւր զմեռեալ նըն-  
ջեցոյց ՚ի ծոցի իմում . ասէ միւս կինն , ոչ՝ տէր իմ , մե-  
ռեալն է որդի սորա , իսկ որդի իմ կենդանին . զնոյն բան  
հաստատէր և միւսն :

139. Աճեռ Սաղովնոնի :

**Ծ**անը էր որոշել արքայի զբանս , զոր խօսեցան նո-  
քա անորոշ իմն եղանակաւ , վայ կամելով ՚ի յայտ ա-  
ծել զՃմարտուի , ասէ , բերէք առ իս զսուր և կարեալ  
բաժանեցէք զմանուկն զկենդանին յերկուս , և տուք ըղ-  
կէս նորա միում , և զկէսն միւսում յարեաւ կինն ,  
որոյ որդի էր կենդանին , և ասէ՝ յիս տէր , տուք նմա զող-  
ջոյն մանուկն կենդանի , և մահու մի սպանանէք զնա . իսկ  
միւս կինն ասէր , մի իմ լիցի և մի դորա , այլ կտրեցէք  
զնա ընդ մէջ . յայնժամ ասէ արքայն , տուք զմանու-  
կըն կենդանի այնմ , որ սասաց թէ տուք զդա նմա և մի ըս-  
պանանէք , նու է մայր դորա . լուաւ իսրայէլ զդատաս-  
տանն , զոր դատեցաւ արքայն և զարմացան ընդ իմաս-  
տութիւն նորա :

140. Սաղովնոն շինէ զատաձար ՚ի 3000 ամբ զինի  
ստեղծ հան աշխարհի :

**Ը**ինեաց սաղովմոն զտուն յանուն տեառն այ , զորս  
զարդարել ոսկեղինօք և արծաթեղինօք և տկամբք պատ-  
ուականօք , եղ ՚ի նմա զտապանակ ուխտին ՚ի սրբութի սրբ-  
քութց . յաւուր յայնմիկ մեծացաւ սաղովմոն քան զամ՝  
թագաւորս երկրի մեծութ , և իմաստութ , և տոմ թագա-  
ւորք երկրի խնդքէին տեսանել զերեսս նորա և լսել զե-  
մաստութ նորա : **Տ**եկինն Սաքայ լուաւ զանուն և զի-  
մաստութ նորա և եկն առ նա պատարագօք փորձել զնա .

իբրև ետես կինն զթմ իմաստուի նորա և զտունն , զոր շինեալ է նա , զթմ զկարգ և զհանդերձանս նորա , զարմացաւ յոյժ :

141. Սաղովնան հեշտանայ ՚ի նոշութեան և գնայ պհեա  
առարտծոց օպարաց :

՚ի ժամանակի ծերուեն սաղովմոնի , կանաք նորա խո-  
տորեցուցին զսիրտ նորա զհետ անոց օտարաց , և ոչ էր  
սիրտ նորա կատարեալ ընդ տեառն այ իւրում , որպէս  
դաւթի հօր իւրոյ . վոյ բարկացաւ Տէր վո բանին այ-  
նորիկ և պատուիրեաց նմա ամենեին չերթալ զհետ  
անոց օտարաց և առնել զթմ , զոր ինչ հրամայեաց  
նմա : Բայց նորա ոչ անսացեալ հրամանի տն շինեաց  
զտուն կուոց և պաշտէր զնոսա : Եւ ասէ Տէր ցսաղովմոն ,  
փոխանակ զի ոչ պահեցեր զպատուիրանս իմ , պատա-  
ռելով պատառեցից զլթագաւորուիդ ՚ի ձեռանէ քումմէ ,  
և տաց զդա ծառայի քում , և եզե այնպէս :

142. Ուսէռվաճ արդի Սաղովնանի նոտութեամբ պատու-  
նանապատ շնորհապեան :

Կնջեաց սաղովմոն ընդ հարս իւր և թաղեցաւ ՚ի քա-  
ղաքի դաւթի հօր իւրոյ . եւ թագաւորեաց ռոբովամ  
որդի նորա ընդ նորա : Խօսեցաւ ամ ժողովուրդն ընդ  
արքայի ռոբովամայ՝ և ասէ , հայր քո ծանրացոյց զա-  
նուր մեր և դութեաթեացն զմեզ ՚ի խիստ ծանրուէ հօր  
քոյ , ասէ ցնոսա ռոբովամ՝ երթայք մինչեւ ցերիս աւուրս  
և դարձջիք առ իս : Իբրև դարձաւ ամ իսրայէլ յաւու-  
րըն երրորդի առ արքայ , խօսեցաւ արքայն ըս խորհրդեան  
մանկուոյն , և թողեալ զխորհուրդս ծերոց , զոր խորհր-  
ցան ընդ նմա , և ասէ , հայր իմ ծանրացոյց զանուր ձեր  
և ես յաւելից յանուր ձեր . հայր իմ խրատէր զձեզ զա-  
նիւք , ես խրատեցից զձեզ քըքովք :

143. Իսրայէլացներ Առաք Համբէն ՚ի Գլուխ Յերուսամայ :

Իբրև ետես ամ իսրայէլ, եթէ ոչ լուաւնոցա արքայ, ասեն ցնա՝ զի՞նչ բաժին կայ մեր ընդ դաւթի, ոչ գոյ մեր ժառանգութի ը օրդւոյ յետեայ. ՚ի վր այսր ամի ընտրեցին ՚ի թագաւոր զյերոբովամ ՚ի գաւազանէն եփրեմի ՚ի վերաց իսրայէլի. ոչ ոք էր զկնի տանն դաւթի, բայց միայն ՚ի գաւազանէ տանն յուղայ և բենիամինի. յայնժամ մի թագաւորութին բաժանեցաւ յերկուս, դո՛ ՚ի յուղա և յիսրայէլ : Ասէ յերոբովամ ՚ի սրտի իւրում, ահա արդ դառնայցէ թագաւորութիս ՚ի տունն դաւթի, եթէ ելանիցէ ժողովուրդս զոհել զոհ ՚ի տան Տեառն յերուսաղէմ. Խորհեցաւ առնելերկուս երինջս ոսկիս և ասէ ցժողովուրդըն, շատ լիցի ձեզ ելանել յերուսաղէմ, ահա անձը ձեր և ինքն արար տօնս որդւոցն իսրայէլի և ել ՚ի սեղանն զոհել :

144. Առջանուածն Առաքուաբութեան իսրայէլացնոց :

Ոչ բազում ժամանակս տեսեաց թագաւորութին իսրայէլացւոց սակս անօրէնութեց իւրեանց և մոլորութ յարդարութ Ճանապարհէ, առ որս բազում անգամ առաքէր Աճ զմարգարէս պատուիրել նոցա, զի դարձցին նոքայանօրէնութեց իւրեանց յանպաշտութ Ճշմարիտ. սակայն ոչ զզացան նոքա և ոչ անսացին բանից մարգարէից, յոյր սակս բարկացաւ Աճ սրտմտութ իւրով, եւ ետ զնոսա ՚ի ձեռս ասորւոց արքայի ՚ի գերութ յատրեստան :

145. Պատմութեան Տովութայ :

Յաւուրս Ենեմսարու թագաւորին ասորեստանեաց զերեցաւ Տովութ յերկըին ասորեստանեաց ՚ի նինուէ, որ ՚ի մանկական տիոց անտի գնայը զՃանապարհս Ճշմար-

տուե՞ և զարդարուե՞ . զամ աւուրս կենաց իւրոց ոզոր -  
մուխ բազումն առնէր եղքարց իւրոց և աղդին իւրում ,  
մանաւանդ եղելոց ընդ իւր ՚ի նինուէ : Մինչդեռ մա -  
նուկն էր նա , մերժեցան ՚ի բաց ամ աղդք ՚ի տաճարէն  
երուսաղեմի , գնային զոհել երնջուց երկուց ոսկւոյ , զոր  
արար յերոբովամ արքայն իսրայելի . նա միայն երթայր  
բազում անգամ յերուսաղէմ ՚ի տօնս տարեկանաց , և  
տայր զատուզ և զտատանորդս յարդեանց իւրոց քահա -  
նայից և պաշտէր զԱստուած :

146 . Տովբէլ ՚ի Գելուլէտն իւրուց առնէ զէտպուլէտն  
Հէնամէն :

Յորժամ եհաս տովբէթ յարբունս հասակի , էառ ինքեան  
զկին ՚ի զաւակի հայրենի աղդի իւրոյ , և ծնաւ ՚ի նմանէ  
զՍուբի , որում ՚ի մանկուե անդ ուսոյց զամ Ճշմար -  
տուիս և զերկիւղ Տեառն : Իբրև զերի վարեցաւ նա ՚ի  
նինուէ , պահէր զանձն իւր յամէ , որում ետ բարձրեալն  
շնորհս առաջի արքայի ասորեստանեայց և էր վաճառա -  
կան , որ եղ ՚ի պահեստի առ Գաբայելայ՝ արծաթոյ քըարս  
տամն , զորս ստացեալ էր յարքայէ , յորոյ աւուրս ողոր -  
մուիս բազումս առնէր եղքարց . զհաց իւր տայր քաղ -  
ցելոց և զձորձ իւր մերկոց :

147 . Տովբէլ նազէ զէտպէտն :

Զ կնի ժամանակաց մեռաւ ենեմսար և թագաւորեաց  
սենեքերիմ որդի նորա փոխանակ նորա , որ նեղէր յոյժ  
զիսրայէլև զմեռեալսն հրամայէր ընկենուլ արտաքոյ պա -  
րըսպին . յայնժամ գողանայր տովբէթ և թաղէր զմե -  
ռեալս , զորս կոտորէր արքայն սրտմառը իւրով . յետոյ ՚ի  
խնդիր ել մարմնոց դիականցն , բայց ոչ եղիտ . եմուտ

մի ոմն ՚ի նինուէացւոց անտի և ծանոյց թագաւորին վասն  
գուիակունսն թաղելոյ ։ իբրև գիտաց թէ ինդրեն սպա-  
նանել զնա , զահի հարեալ գնաց փախստեայ ։ որով յա-  
փըշտակեցան ինչք նորա և ոչ մնաց բնաւ ինչ , բայց մի-  
այն կինն և տուբի որդի իւր :

148 . Տուլլիու առ ոչնոշ համարի պէշտամբան մէլչո-  
ւաբաց իւրոց :

՚ի տօնին մեծի , որ է սըն յեօթներորդ շաբաթուն , ա-  
րար տովթիթ զջաշ մեծ և առաքեաց զորդին իւր ա-  
ծել յեզրարց իւրոց յաղքատաց , զորս միանգամ և  
զտցէ , և ինքն բազմեալ ՚ի սեղան մնայր նոցաւ Եկն  
որդին և ասէ , հսկյր՝ մի ոմն յազգէ մերմէ , որոյ թա-  
փեալ են ոտք , ահա կայ ՚ի հրապարակի անդ մեռեալ .  
և նը մինչև էր ճաշակեալ չորտաւ էառ զնա և եբեր  
՚ի տուն իւր մինչև եմուտ արեգակն , և ապա թաղեաց  
զնա : Մերձաւորք նորա այպն առնէին զնովաւ և ասէին  
արդ ոչ ևս երկնչի մեռանել վասն իրացս այսոցիկ . զի  
վասն որոյ հալածեցաւն դարձեալ եկեալ թաղէ զմե-  
ռեալս :

149 . Տուլլիու հուլանայ :

՚ի նմին գիշերի իբրև թաղեաց տովթիթ զմեռեալն և  
ննջեաց վաստակեալ տու որմոյ գաւթին և զերեսս իւր  
ոչ ծածկեաց , անդիտացեալ թէ Ճնջղուկը նստեն յա-  
ռաստաղս անդ , աչօք բացօք հայէր ՚ի վեր և ձագբն  
ծրտէին ջերմաջերմ յաչս նորա . գնացեալ ապա առ  
բժիշկան ոչինչ իւրիք օգնեցին նմա :

150 . Տուլլիու հալծէ նէ գոզունէ իպէ ուշն :

Այնն տովթիթայ մանէր և գործէր Ճեռօք իւրովք և

տայր տերանց , և նոքա տային նմա զվարձս իւր . յաւուր միում յաւելին նմա միւս ևս ուլ . յորժամ եկն առ այրն իւր տովթիթ , սկսաւ տովթիթ կագել ընդ նմա , և ասել , ուստի բերեր դու զուլդ զայդ , մի ժէ գողունիթ իցէ , տհւր անդը ցտեարս իւր , զի ոչ է օրէն ուտել զդողունիթ : Ասէ ցնա կինն իւր , պատիւ ետուն ինձ վասն վարձուց իմոց . իսկ տովթիթ չհաւատայր նմա և ստիպէր դարձուցանել առ տեարս իւր . դարձեալ ասէ ցնա կինն , ուր են արդ ողորմուիք քո և արդարուիք , զի ահաւասիկ յայտնի եղեն քեզ :

### 151. Տովթիթ Խըտակ զորուն իւր :

Յաւուր յայնմիկ յիշեաց տովթիթ զարծաթն , զոր եդ առ գաբայելայ և ասէ 'ի միտս իւր , ես խնդրեցի մահ անձին իմում , ընդէ՛ր ոչ կոչեմ զտութիա զորդին իմ և ցուցանեմ նմա զամ մինչև մեռեալ իցեմ : Կոչեաց զնա և ասէ , որդեակ իմ , եթէ մեռանիցեմ ես՝ թաղեսջիր զիս՝ և մի անարգեր կամ անտես առներ զմայր քոյ , այլ պատուեաւ զնա զտմ աւուրս կենաց քոյ , և զտմ ինչ՝ որ հաճոյ է նմա . յիշեաւ զի բազում Ճգունս կրեաց վասն քո՝ յորժամ էիր դու յորովայնին . յորժամ մեռանիցի թաղեսջիր զնա լը իս 'ի նմին շիրմի : Յիշեաւ դու զՏէր Աստուած քո զտմ աւուրս կենաց քոյ . մի անցաներ զալատուիրանօք նորա , յընչից քոյ տհւր զողորմուիս աղքատաց և մի դարձուցաներ զերեսս քո յամ չքաւորաց :

Որչափ և իցէ քո ըստ նմին և արասցես զողորմուիս , զի ողորմուի փրկէ զմարդն 'ի մահուանէ . զգոյշ լեր անձին քում 'ի պունկութենէ , մի առնուցուս դու կին յագդէ օտարէ . որդեակ 'սիրեա զեղբարս քո և մի դար-

ձուցաներ զսիրտ քո յեղբարց քոց, յորդւոց և 'ի  
դստերաց ժողովրդեան քոյ առնուլ քեղ 'ի նոյանէ  
զկին, վարձք վարձկանի քոյ առ քեղ մի ազցին, այւ  
հատն առժամայն. լեր խրատեալ յամ կեանս քո, և  
խնդրեալ յամ մարդոյ զխորհուրդ. զոր դու ատես՝ մի  
ումեթ առներ :

152. **Տուբէն պատուիրէ որդւոյ իւրուց գնալ առ Գառ-  
բայէլ և առնուշ ՚ը նմանէ պատոն պաշանդա :**

**Եւ արդ՝ յուցանեմ քեղ զտասն տաղանդս արծաթոյն,**  
զոր եղի ես 'ի պահ առ գաբայելայ 'ի Հռադաւ յերկ-  
րին մարաց : **Պատասխանի ես որդին իւր տուքիս,**  
հայր՝ արարից զամ ինչ, զոր պատուիրեցեր ինձ, այլ  
ես զիարդ կարացից գտանել զարծաթ, զի ոչ գիտեմ  
զայրն : **Ետ նմա զգիր առնն, առ որում կայր գանձն**  
յաւանդի և ասէ, խնդրեալ դու քեղ զայր, որ եկեսցէ  
ընդ քեղ, ես տաց նմա զվարձս իւր :

153. **Տուբէն գտանէ զ հաւաքայէլ հըեշտահ ուղեցոյց ին-  
չեան :**

**Գնաց տուքիս խնդրել ընդ իւր վարձաւոր և եղիս**  
**զ Հռափայէլ հըեշտակ.** ոչ զիտելով առւքիսյ թէ  
ով իցէ նա, ասէ ցնա, կարե՞ս դու գտէ ընդ իս 'ի  
հռադաւ յերկիրն մարաց, կամ տեղեակ և խելամժւտ  
ինչ ես տեղեացն : **Ասէ ցնա հըեշտակն՝ եկից ես ընդ**  
**քեղ, զի Ճանապարհին տեղեակ եմ և Ճանաչեմ զգա-**  
**բայէլ զեղբայր մեր . դարձաւ տուքիս և պատմեաց**  
**հօրն և ասէ թէ ահաւասիկ գտի զընկեր, որ գայ ընդ**  
**իս . ասէ ցնա հայրն՝ կոչեալ զնա առ իս, զի գիտացից՝ թէ**  
**հաւատարիմ իցէ գտէ ընդ քեղ . և նա կոչեաց զնա 'ի**

՚ի ներքս և ողջոյն ետուն միմեանց . ասէ ցնա տովբիթ՝ առանձ ինձ ո՞րքան պլաստ իցէ ինձ տալ քեզ ՚ի վարձ, դրամ մի յաւուր և զռուծիկն որպէս որդւոյն իմում , յաւելից ևս ՚ի վարձն քո՛ եթէ ողջորմութ Աստուծոյ դառնայցէք այսրէն . հաճոյ ժուեցաւ նոցա առնել այսպէս : Ելին և գնացին երկոքեան ՚ի միասին և շուն պատահելին ընդ նոսա :

## 154. Տուբէն Տիեմոքէ զէնին իւս :

Իբրև յուղի անկան նոքա՝ ասէ լալով մայրն տուբիայ , տովբիթ՝ զի՞ արձակեցեր զորդեակն ՚ի մէնջ . ոչ նա էր ցուպ ծերուե մերոյ՝ մտանել և ելանել առաջի մեր , արծաթ արծաթոյ մի ժամանեցէ , այլեղից ինիսանակ որդեկին մերոյ , քանզի որ պատրաստեալսէ մեզ յԱստուծոյ՝ բաւականէ մեզ : Ասէ ցնա տովբիթ , մի լիցի քեզ տրտմուի՝ քո՞յր , զի ողջութ եկեսցէ , և աչք քո տեսցեն զնա . զի հրեշտակ նորա բարի առաջնորդեցէ նմա , և յաջողեսցէ զՃանապարհո նորա . և դարձցի այսրէն ողջութ . սոյնօրինակ մխիթարէր տովբիթ զիին իւր , մինչեւ դադարեաց նա ՚ի լալոյ անտի :

## 155. Տուբէն ապասէ ՚ի չէտնէ :

Եկին նոքա ՚ի գետն դկլաթ և հանգեան անդ առափամբն . պատանեակն տուբիա էջ լուանալ յեղը գետոցն . վաղեաց ձուկն մի ՚ի գետոյ մնտի և կամէր կլանել զպատանեակն : Ասէ հրեշտակն ցպատանեակն , բուռն հար՝ կալ զձուկնդ . կալաւ տուբիա զձուկն և եհան զնա ՚ի ցամաք : Դարձեալ ասէ ցնա հրեշտակն , բաց դու զփոր ձկանդ և հան զսիրտ և զլեաբդ և զլե-

զին և պահեստ զդուշութ : Արար պատանեակն որպէս  
և հրամայեաց նմա հրեշտակն . և զծուկն խորովեցին և  
կերան , և ապա գնացին երկոքեան ՚ի միասին :

156 • Տուբէտիս Գոյ յԵղիստառին :

Յորժամ մօտ եղեն տուբիա և հրեշտակն յեկը-  
տանս , ասէ ցնա պատանեակն , ազարիան եղբայր՝ վասն  
ոյր բարձաք զսիրտո , զլեարդո և զլեղիս ձկան , որում  
ասէ հրեշտակն , ոիրտդ և լեարդդ՝ ելժէ ոք ունի զդե-  
կամ զայս պիղծ՝ զայս արժանն է ծխել առաջի առնն  
կամ կնոջն , զի ոչ ես այլ դիւահարեսցի . և լեղիս՝ ե-  
լժէ ոք ունի զլուսն յաջս իւր , օծանի սովար և բժշկի:  
Հուսկ ապա իբրև մերձեցան նոքա ՚ի հռագուէ , ասէ  
հրեշտակն ցպատանեակն՝ Եղբայր այսօր ունիմք մեք հանդ  
չել առ հռագուելայ , ինքն է ազգական քո , և է նո-  
քա դուստր , արդ՝ լուր ինձ , խօսեցաց ես ընդ հօր  
աղջկանն , յորժամ դարձցուք այսրէն ՚ի հռագուացւոց  
անտի՝ արասցուք քեզ զհարսանիս . քանզի զիտեմ՝ ես  
զհռագուէլ , զի ոչ տացէ զնա առն օտարի , որ ոչ է  
մերձաւոր արեան , վասն զի զժառանգուին արժանն է  
քեզ առնուլ քան այլում ումեք :

157 • Տուբէտիս և հրեշտառին Ռատիոյէլ ագունին ՚ի առն  
հաւաքուէլայ :

Եկին նոքա յեկըատանս և մտին ՚ի տուն հռագուե-  
լայ . ել ընդ առաջ նոցա Սառա , ողջոյն ետ նոցա և  
նոքա նմա , և տարաւ զնոսա ՚ի տուն : Ասէ հռագուէլ  
ցիին իւր՝ տեսանե՞ս զի նման է պատանեակս տովըիժայ  
եղբօրորդւոյն իմոյ : Եհարց ցնոսա , ուստի՞ էք՝ Եղբայրք .  
ասեն ցնա՝ յորդւոյն նեփժաղիմայ եմք , որք զերեալ

են ՚ի նինուէ : Ասէ ցնոսատ , Ճանաչէ՞ք դուք զտովլը իթ զեղայրն մեր , կտոմ մղջ է , պատասխանի ետուն նորա Ճանաչեմք և ողջ է . ասէ տուբիս՝ հայր իմ է տուբիթ : Իբրև լուաւ հռագուէլ նոյնժամայն համբուրեաց զնա և ելաց յոյժ ՚ի խնդուէն . և օրհնեաց զնա ասելով բարւոյ և բարեբարի առն որդի : ՚Ի լսելն թէ տովլիթայ կացին տչք , ելաց ինքն , կին նորա և սառա դուստր նոցա :

458. ♫ առագուէլ պայ զդուսապը իւր չՍռւելիայ ՚ի հնութեւն :

Ընկալաւ հռագուէլ և հանգոյց զնոսա մեծաւ ուրախութ , եզեն նոցա խոյ մի ՚ի խաշանց , յօրինեալ առաջի նոցա եղին խորտիկս բաղզումս : Ասէ տուբիս ցհռափայէլ , եղբայր , արդ խօսեաց դու վասն որոյ խօսէիմն ՚ի Ճանապարհի անդ , զի եղիցի այնպէս . ասէ հռագուէլ ցտուբիս , կեր՝ արը և ուրախ լեր , զի քնզ անկ է առնուլ զմանուկն իմ . ասէ տուբիս ոչինչ Ճաշտկեմ ես աստ՝ մինչև հաստատէք առիս զիլուդ : Ասէ հռագուէլ՝ առ զնա քեզ ըստ օրինաց , զի դու եղբայր ես աղջկանն , քեզ լիցի , այլ ողորմածն Աստուած յաջողեսցէ ձեզ ՚ի բարիս . կոչեաց նա զսառա զդուստր իւր , կալաւ զձեռանէ նորա և ետ զնա տուբիս կնուի և օրհնեաց զնոսա . կոչեաց նա զիկին իւր և առեալ ետ աղջկան զմմ ինչս տան , հաստատէր մուրհակօք և կնքէր . յասլա սկսան ուտել և ըմպել և ուրախ լինել :

459. ♫ Գռւելայէլ գայ ՚ի հարսանիս Տռւելիա :

Երդմնեցոյց հռագուէլ զտուբիս չդնալ մինչև կա-

տարեսցին աւուրբ չորեքտասանը հարսանեաց : Յայնծ ամ՝ կոչեաց տուբի զհռափայէլ և ասէ՝ Եղբայր, առ դու ընդ քեզ զպատանի ոմն և զերկուս ուղաս և զնան ՚ի հռագիւս առ գաբայէլ, և բեր դու ինձ զարծաթն անտի, և զնա առեալ ընդ քեզ ածցես ՚ի հարսանիս : Գնաց հռափայէլ ըստ բանին տուբիայ առ գաբայէլ և ետ նմա զգիր մուրհակին . և նա եբեր նմա զպարկն կնքօքն հանդերձ, և ետ նմա : Աանխեալ և գաբայէլի ընդ առաւօտսն՝ եկն ՚ի հարսանիս :

160 • Հայր և Տայր առելիոց շան ՚ի վէրաց յամենալոյն որդւոց եւ ընդունու :

Տովթիթ հայրն տուբիա զամ աւուրս խորհէր ՚ի սրտի իւրում զորդւոյ իւրմէ, և յորժամ կատարեցան աւուրբ ժամանակին և ոչ եկն, ասէ, արդեօք մեռմւ գաբայէլ, ոչ ոք ետ նմա զարծաթն և նա ոչ կամի գալ յամօթոյ, վակ տրատում էր յոյժ տովթիթ : Ասէ յնա կինն իւր՝ կորեաւ մանուկն մեր, զի յամեաց այսչափ . սկսաւ նա լալ զնա և սգալ ասելով՝ ոչ ինչ են ինձ պէտք որդեակ իմ և ոչ ինչ . այլ ընդ էր բնաւ թողի զքեզ լցս աչաց իմոց . այսպիսի հեծեծանօք ելանէր զօրհանապաղ մայրն տուբիայ և գայր ՚ի հանապարհ անդ, ընդ որ գնացինն, ՚ի տուէ զհաց ոչ ուտէր, և ՚ի զիշերի ոչ դադարէր ՚ի սդալց զորդին իւր :

161 • Տուբիո յէսո պատհոյ առ ծնողս եւր :

Իւրև կատարեցան չորեքտասան աւուրբ հարսանեացն, ասէ տուբիա ցհռագուէլ՝ արձակեալ զիս, զի հայր իմ՝ և մայր ոչ ևս անկնունին տեսանել զիս ՚ի հոգոց : Ասէ յնա աներն իւր՝ կաց մնան դու աստ տու իս, ես յղեցից զմանկունս առ հացըն քո, որք սլատմեսցեն զքէն:

Ասէ տուբիա ոչ է այդպէս, այլ արձակեած զիս առ հայր իմ. յարեաւ հռադուէլ՝ ետ նմա զսառա զկիննորա և զկիս ընչից իւրոց, օրհնեաց զնոսա և արձակեաց. իբրև մերձեցան նոքա ՚ի նինուէ, ասէ հռափայէլ ցտուբիա, ոչ զիտես դու եղբայր՝ ող թողեր դու զհայրքո, եկ յառաջ անցցուք քան զկինդ և պատրաստեցուք ըզտուն, առ դու ՚ի ձեռին քո զլեղին ձկան. գիտեմ ես զիքացցին աչք հօր քո, յորժամ օծցես շուրջ զաքօքն զլեղիդ, նա կսկծեցուսցէ և հանցէ զլուսն յաշաց նորա և տեսանիցէ :

162. Տռւէլո Գոյ հաստինէ ՚ի պուն իւն :

Աննա մայր տուբիայ նատէր և սպասէր ըստ սովորունն ՚ի ձանապարհի որդւոյ իւրոց, իբրև ետես զնա ՚ի հեռաստանէ՝ գնաց վաղվազակի առ այրն իւր և պատմեաց նմա, թէ ահաւասիկ որդին քո գայ, և ընկեր իւր ընդ նմա. ընթացաւ աննա ընդ առաջ և անկաւ ՚ի վերայ պարանոցի որդւոյն իւրոց՝ և ասէ, տեսի ես զքեղ որդեակ իմ, արդ՝ այսուհետեւ անհոգ մեռայց. յայնժամ տովքիթ ելանէր արտաքոյ առ դրունսն, խարխաբէր, գլորէր. որդին ընթացեալ առ նա յարոց զնա, և ցանեաց զլեղին յաշը նորա ասելով՝ ժումեած հայրիկ. իբրև եկաց սուդինչ, վաղվազակի կեղեւեցան և անկան լուսունքն յաշաց նորա, ետես նա զորդին իւր, անկաւ զպարանոցաւ նորա և ելաց, ասելով՝ օրհնեալ ես Տէր Ած, և օրհնեալ է անուն քո յաւիտեանս. օրհնեալ են ամ սրբ քո հրեշտակը, զի խրատեցեր և ողորմեցար ինձ, զի տեսանեմ զորդի իմ զտուբիա և

163. Հռւշաբանէն հասպայէլ պատուայ անդրէն յէրէնն :

Կոչեաց տովքիթ զորդի իւր զտուբիա՝ և ասէ, տես արդ-

նրդեակ զվարծս առնդ , որ եկն լը քեղ , յաւելուլ յացն  
արժան է , ասէ ցնա տուբիա , հայր՝ ոչինչ պակասէ իհա  
եթէ տամ դմա զկէս ընչից իմոց , զոր բերի , զի ած զիս առ  
քեղ ողջ , զկինն իմ ողջացոյց , զարծաթն իմ եքել , և  
զքեղ նոյնպէս ողջացոյց : Յայնժամ կոչեաց և զհրեշտա-  
կըն և ասէ՝ առ դու զկէսն ամի , զոր բերերն . պատաս-  
խանի ետ նոցա հրեշտակն , առաքեաց զիս ԱՃ բժշկել  
զքեղ և զնուն քո զսառա . ես եմ հռափայէլ յեօթանց  
անաի սրբոց հրեշտակաց , որք հանեն մատուցանեն զո-  
ղօթս սրբոցն առ ԱՃ . եւ արդ՝ այժմ խոստովան եղե-  
րուք այ մերում , զի ելանեմ ես առ այն , որ առաքեացն  
զիս , զայս իբրև ասաց՝ այլ ոչ ես տեսին զնա :

#### 464. Տովութեալ և Տուեիս մշամանին :

Տովութէր ամաց յիսուն և ութից , յորժամ կացին  
տչք նորա , յետ ամաց ութից բացան միւսանգտմ տչք  
նորա և կացեալ ամս քառասուն և երկու կոչեաց նա զոր-  
դին իւր և ասէ՝ հրդեակ առ դու զօրդիս քո , զի ահա-  
ւասիկ ես ծերացեալ եմ և մերձ եմ ՚ի մեռանիլ . արդ•  
երժ դու յերկիրն մարաց , զի հաւատամ ես , ող և խօ-  
սեցաւ Յովիան մարդարէ վասն նինուէի եթէ կործանես-  
ցի , այլ դու սլահեա զօրէնս և զհրամանս , լեր ողորմած  
և արդար , զի բարի լինիցի քեղ , և ժաղեսցես զիս և  
զմայր քո ընդ իս : իբրև զայս ասաց՝ աւանդեաց զհողին  
՚ի վերաց մահճացն և ժաղեաց զնա որդի նորա փառօք  
և յորժամ մեռաւ աննա մայր իւր , ժաղեաց զնա ես առ  
հօր իւրում . և ապա զնաց տուբիա կնաւ իւրով և որդ-  
ւով իւրով հանդերձ յեկբատանս մարաց առ հռափու-  
էլ աներ իւր . ծերացաւ նա պատուվ մեծաւ , և ժա-  
ղեաց զւաներն և զզոքանչ իւր , և ժառանգեալ վտուն նո-

յա , նոյնպէս և ինքն զկնի ժամանակաց ինչ մեռաւ անդ  
յեկբատանս մարաց՝ ամաց հարիւր քսան և եօթնից :

### 165. Թագավորք Յուդայ Ասէնոս և Ասոս :

՚Ի մեռանել ոռըովամայ ժագաւորեաց աքիաս որդի  
նորա փոխանակ նորա ՚ի վերայ յուղայ ամս երիս և յա-  
ւելաւ ընդ հարս իւր , և փոխանակ նորա ժագաւորեաց  
